

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ԿԱՍ ԱԶԳԵՐԻ ԱՊԱՊԵՏԱԿԱՆ ԱՊԱԳԱՅԻ ՇՈՒՐՁ

Պետության ապագայի՝ նրա հնարավոր տրանսֆորմացիայի (ընդհուպ՝ վերացման) վերաբերյալ դիսկուրսն այսօր հատկապես տարածված է արեւմտյան քաղաքագիտական շրջանակներում: Կա տեսակետ, որ արդի հասարակության (որն ընդունված է բնորոշել իբրև *հետինդուստրիալ-տեղեկատվական*) զարգացման միտումները հիմնովին ձեւափոխելու են պետության ավանդական ինստիտուտը՝ այն դարձնելով ժամանակավրեպ, եւ հետայսու ազգերն ու հասարակությունները ղեկավարվելու են վերազգային կամ վերպետական կառույցների միջոցով:

Ընդհանրապես, գլոբալ կառավարման խնդիրն ունի առավելապես քաղաքական նպատակադրում. գլոբալացման միջոցով աշխարհի միաբեւեռ կառավարում՝ ազգային կառույցների, ինքնիշխան միավորների, դիմադրության օջախների վերացմամբ:

Անշուշտ, պետությունը ազգի կամ հասարակության կազմակերպման միակ, միզուցե, նույնիսկ լավագույն ձեւը չէ եւ մի օր կարող է այլեւս չլինել, ինչպես չի եղել ինչ-որ ժամանակ առաջ: Սակայն ուժի այլ՝ արեւմտյանից տարբեր կենտրոններ ամենեւին էլ ոգեւորված չեն պետության ինստիտուտի վերացման կամ հասարակությունների վերպետական կառավարման հեռանկարով: Եվ բազմաբեւեռության գնացող արդի աշխարհում նման հեռանկարն, առարկայորեն, գոնե մոտ ապագայում տեղ չունի:

Մեր պարագայում պիտի ասել, որ այսօր Հայությունն իր հողի վրա ինքնակազմակերպվելու այլ կենսունակ մոդել չունի, քան ազգային պետությունը: Ինչ մնում է համաշխարհային Հայության կազմակերպմանը (համահայկական ցանցի ձեւավորմանը), ապա, բնականաբար, միայն պետական կառույցն է վիճակի չէ նման տարողունակ խնդիր լուծել, եւ այստեղ, անշուշտ, ժամանակակից տեղեկատվական հասարակության ընձեռած հնարավորություններից պետք է կարողանալ օգտվել:

Իսկ քանի դեռ չի գտնված քաղաքական կազմակերպման առավել արդյունավետ ձեւ, քան պետությունը, ազգերի ներդաշնակ գոյակցության ապապետական ապագան կմնա երազ, որը հաճախ է դառնալու գաղափարախոսական խայծ ուժեղների ձեռքին (ինչպես, օրինակ, համայնավարական ապագան)՝ թուլերին ապակողմնորոշելու համար:

ՎՐԱՑ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ **Փագիկ Տեր-Հարությունյան**

Հարավային Օսիայի խնդրի հետ կապված 2008թ. օգոստոսյան զարգացումները հանգեցրին նոր աշխարհաքաղաքական իրողությունների, որոնց համարժեք ընկալումը եւ հետեւություններ անելը հրատապ խնդիր է եւ որոշումներ ընդունող ՀՀ քաղաքական ընտրանու, եւ վերլուծաբանական հանրության համար: Ստորեւ փորձել ենք դիտարկել ռազմաքաղաքական գործընթացների առանձնահատկությունները եւ հնարավոր դրդապատճառները: Որպես ելակետ ընդունվել է այն մոտեցումը, ըստ որի կատարվածը հստակորեն ենթարկվում է բազմաբեւեռ համակարգին բնորոշ երկրորդ սառը պատերազմի տրամաբանությանը:

Մինչ օգոստոսյան պատերազմի սկիզբը Վրաստանն իր նախկին ինքնավարությունների՝ Աբխազիայի եւ Հարավային Օսիայի նկատմամբ վարում էր դիրքային-հոգեբանական պատերազմ: Նկատենք, որ վրացական կողմի՝ ամերիկյան եւ բրիտանական խորհրդատուների ղեկավարությամբ ընթացող գործողությունները, որոնց նպաստում էին Հարավային Օսիայի եւ Աբխազիայի տարածքների աշխարհագրությունը եւ էթնիկորեն ոչ միատարր բնակչությունը, բավական արդյունավետ էին: Թբիլիսին հաջողությամբ իրագործում էր այսպես կոչված «սողացող էքսպանսիայի» ռազմավարությունը՝ վերահսկողության տակ վերցնելով Կոդորի կիրճը եւ Հարավային Օսիայի տարածքում ամրացնելով վրացական հենակետերը: Ստեղծված իրավիճակը, կարծես թե, պիտի բավարարեր ամերիկացիներին, քանի որ թույլ էր տալիս վերահսկել էներգատար խողովակաշարերը, մոտ լինել Հյուսիսային Կովկասի լարվածության կենտրոններին, ունենալ ռազմական հենակետեր Իրանին օդային հարվածներ հասցնելու համար եւ, ամենագլխավորը՝ «փակել ռուսների մուտքը» Հարավային Կովկաս: Միեւնույն ժամանակ, բուֆերային գոտիների անորոշ կարգավիճակը եւ ուրվագծերը, հաշվի առնելով ռուսական գործոնի գլոբալ եւ տարածաշրջանային ակտուալացումը, ընդհանուր առմամբ ձեւավորում են «ամորֆ» եւ դինամիկ իրավիճակ, ինչն անկանխատեսելի է դարձնում քաղաքական հեռանկարը եւ ռիսկեր պարունակում ԱՄՆ-ի համար:

Ակնհայտ է նաեւ, որ Վրաստանի այսպես կոչված տարածքային ամբողջականության վերականգնման հարցն առանձնապես չպետք է

մտահոգեր Վաշինգտոնին: Ավելին. այդ հիմնախնդրի շարունակական առկայությունը յուրահատուկ երաշխիք է ԱՄՆ-ի համար՝ Վրաստանի հետ երկարատև հարաբերություններ ունենալու տեսանկյունից:

Վերոնշյալ հանգամանքները հիմք են ծառայում վերլուծաբանների մի մասի համար, չժխտելով ամերիկյան գործոնի կարեւորությունը, համարել, որ պատերազմական գործողություններ սկսելու նախաձեռնությունը պատկանում էր բացառապես Վրաստանի նախագահին եւ պայմանավորված էր նրա անհեռատես քաղաքականությամբ: Սակայն կարծում ենք, որ Հարավային Օսիայի դեմ ձեռնարկած «Մաքուր դաշտ» գործողությունը ոչ միայն տեսականորեն մշակվել, այլև իրագործվել է անմիջական ամերիկյան ղեկավարության ներքո, եւ նման մոտեցման համար կան որոշակի հիմնավորումներ:

Հայտնի է, որ 2003թ. «գունավոր» հեղափոխությունից հետո Վրաստանը վերածվել է տարածաշրջանում ԱՄՆ «ֆորպոստի»: Վրաստանում ամերիկյան քաղաքական ու ռազմական ներկայության չափը թույլ է տալիս որոշ քաղաքագետների այդ երկիրը դասել այսպես կոչված «proxy» (այսինքն՝ այլոց կողմից միջնորդված, ինքնուրույնությունից զուրկ) պետությունների շարքին: Նման պայմաններում խիստ դժվար է հավատալ, թե վրացական իշխանությունները կարող են ինքնակամ որոշումներ ընդունել. դա առնվազն հակասում է ԱՄՆ-Վրաստան հարաբերությունների տրամաբանությանը: Նման սցենարի շրջանակներում հնարավոր է նաեւ, որ ԱՄՆ-ը անուղղակիորեն է հրահրել Վրաստանին (օգտագործելով այդ երկրի ղեկավարի անկայուն հոգեկան դիմագիծը) դիմել ռազմական գործողությունների, կամ էլ, տեղյակ լինելով պատրաստվող հարձակմանը (ինչը կասկած չի հարուցում՝ հաշվի առնելով թեկուզ ամերիկյան զինվորական խորհրդատուների առկայությունը), նվազագույնը չի խոչընդոտել վրացական նախաձեռնությանը: Միեւնույն ժամանակ, պատերազմական գործողությունների դիմելու համար՝ ռազմավարական արվեստի հարուստ ավանդույթներ ունեցող ԱՄՆ-ին հարկավոր էին լուրջ հիմնավորումներ: Դրանք հասկանալու համար անհրաժեշտ է անդրադառնալ գլոբալ քաղաքական իրավիճակի հետ կապված խնդիրներին:

Ինչպես հայտնի է, միաբեւեռից բազմաբեւեռ համակարգի վերափոխվելու անցումային փուլն ավելի կարճատև եղավ, քան կանխատեսվում էր, եւ այդ գործընթացի հիմնական հայտանիշը Միացյալ Նահանգների նահանջն է իր գլոբալ մենատիրական դիրքերից: Որպես հետեւանք՝ ամերիկյան քաղաքական ընտրանին սկսեց մշակել եւ իրագործել նոր, այդ իրողությանն ավելի համարժեք քաղաքականություն: Մասնավորապես, տպավորությունն այնպիսին է, որ այն տարածա-

շրջաններում եւ երկրներում, որտեղից ենթադրվում է ռազմավարական ապագայում ԱՄՆ նահանջը, ձեւավորվում են երկարատեւ գործող եւ ոչ մեծ ռեսուրսներ (որոնց սղությունը զգալի է դարձել) պահանջող իրավիճակներ (այսպէս կոչված «դանդաղ գործողության ականներ»), որոնք կաշտպանեն ամերիկյան շահերը եւ ազդեցության հնարավորությունները: Նման քաղաքականություն իրագործելու համար արդյունավետ են «էֆեկտների» վրա հենված «երրորդ սերնդի» տեղեկատվական ներգործությունները, երբ համալիր (պատերազմական եւ խաղաղ բնույթի) գործողությունները փոխում են հակառակորդի պահելաձեւը ներազդողին ձեռնտու ուղղությամբ:

Բոլոր պարագաներում կասկած չի հարուցում, որ մինչ Հարավային Օսիայի դեմ ռազմական գործողություններ ձեռնարկելը ամերիկյան կողմն անպայմանորեն հաշվարկել էր ռուսաստանյան միջամտության հնարավորությունը, այսինքն՝ պետք է նկատի ունենար նաեւ պատերազմի անհաջող ելքը: Այդ ռազմավարությունը, որը պայմանականորեն կարելի է անվանել «բացասական արդյունքից բխող էֆեկտների քաղաքականություն», ունի իր յուրովի տրամաբանությունը եւ նկատառումները: Դիտարկենք դրանք.

1. Անկախ արդյունքից, պատերազմը անհակադարձելիորեն վատթարացնում է Վրաստան – Ռուսաստան հարաբերությունները (անկախ ցանկացած նոր վրացական ղեկավարության քաղաքական նախասիրություններից), ինչն ամրացնում է ամերիկյան դիրքերը տարածաշրջանի համար կարելորագույն նշանակություն ունեցող այդ երկրում:

2. Պատերազմը Ռուսաստանի հաղթանակի պարագայում (այս սցենարն ամերիկյան քաղաքական ղեկավարության եւ զինվորական հրամանատարության համար պետք է որ հաշվարկվեր) ձեւավորում է վերջինիս ազդեստրի իմիջը: Դա հրատապ է ԱՄՆ ներքաղաքական, հատկապես՝ նախագահական ընտրությունների հարթությունում, քանի որ այդպիսով խրախուսվում է ռադիկալ քաղաքական ուղղությունը եւ առաջանում է հարձակողական ոճի գործիչների պահանջարկ:

3. Պատերազմը Ռուսաստանի հաղթանակի պարագայում արդյունավետ կլիներ նաեւ եվրոպական դաշնակիցների համախմբման տեսանկյունից. դա հարմար առիթ էր հիշեցնելու «հին Եվրոպային» Ռուսաստանի հետ կապված ռիսկերի մասին, իսկ «նոր Եվրոպացիների»՝ էլ ավելի սերտացնելու հարաբերություններն ԱՄՆ-ի հետ (ինչպէս դա տեղի ունեցավ Լեհաստանում հակահրթիռային համակարգերի տեղակայման խնդրում):

4. Ամերիկյան համապատասխան քաղաքականության դեպքում՝ Ռուսաստանի ռազմական հաղթանակը կներքաշեր վերջինիս գլոբալ դիմակայության գործընթացների մեջ, ինչն իր հերթին կպահանջեր ռեսուրսների մեծ ծախս: Նման ռազմավարությունը Առաջին սառը պատերազմի ժամանակ հանգեցրել էր «սպառազինությունների մրցավազքի», ինչը եւ հանդիսացավ ԽՍՀՄ տնտեսական փլուզման պատճառներից մեկը: Ռազմավարական հեռանկարում ամերիկյան ընտրանին կարող է ակնկալել նման զարգացումներ նաեւ արդի Ռուսաստանի համար:

5. Ռուսաստանի հաղթանակից հետո, վերջինիս կողմից Յարավային Օսիայի ու Աբխազիայի ճանաչումը կստեղծեր նախադեպ Ռուսաստանի Դաշնության որոշ սուբյեկտների անջատողական գործողությունների համար:

Փորձենք գնահատել զարգացումները Վրաստանի հնարավոր հաղթանակի պարագայում: Սա տեսական տարբերակ է, քանի որ նման սցենարի հավանականությունը Ռոքի լեռնանցքի հյուսիսում կանգնած ռուսաստանյան 58-րդ բանակի առկայության դեպքում գործնականում ավելի քան փոքր էր: Սակայն գուցե եւ որպես «հաղթանակ» պատկերացվում էր հաջող հարձակողական գործողություններից հետո վրացական զինուժի նահանջը ռուսական հակահարվածից հետո, որը կմեղմվեր տարբեր խողովակներով ՌԴ ղեկավարության վրա ճնշումների միջոցով: Յետո կսկսվեր բանակցությունների մի նոր եւ շահեկան փուլ արդեն «կոտրված» Յարավային Օսիայի, «անկամ» Ռուսաստանի եւ «հաղթանակած» Վրաստանի պարագայում: Նման սցենարը, բացի ռազմավարական օգուտներից, կբարձրացներ ԱՄՆ հեղինակությունը եւ կամրագրեր ՌԴ «անօգնական երկրի» իմիջը՝ դրանից բխող բոլոր հետեւանքներով:

Միեւնույն ժամանակ, տեղեկատվական երրորդ սերնդի պատերազմների «էֆեկտները» վրաց-ռուսական պատերազմի առիթով չեն սահմանափակվում միայն ԱՄՆ ներքաղաքական զարգացումներով եւ ՌԴ-ի համար հնարավոր բացասական հետեւանքներով: Դրանք ուղղված էին նաեւ այլ երկրների դեմ:

Ինչպես հայտնի է, ներկայումս սպորտային միջոցառումները խիստ քաղաքականացված են: Պեկինյան օլիմպիական խաղերին նախորդեցին տիբեթցիների ու նրանց համախոհների հայտնի բողոքի ակցիաները, որոնք ՉԺՀ-ն վարկաբեկելու նպատակով կազմակերպված դասական տեղեկատվական գործողություններ էին: Պատերազմն օլիմպիադայի օրը սկսելը կարելի է համարել այդ գործողությունների շարունակություն որակական ավելի բարձր հարթությունում, քանի որ այդպիսով, տեղե-

կատվական տեսանկյունից, մասնակիորեն ստվերվեց այդ մասշտաբային սպորտային-քաղաքական միջոցառումը:

Ինչպես տեսնում ենք, ԱՄՆ քաղաքական օգուտները «պարտված պատերազմից» բավական լուրջ են եւ վկայում են այն մասին, որ ԱՄՆ-ը իրագործում է «բացասական արդյունքից բխող էֆեկտների քաղաքականություն», որի արտահայտություններն են ինչպես «մասնակի գունավոր հեղափոխության» փորձը ԶԶ-ում, այնպես էլ վրաց-ռուսական պատերազմը:

Միեւնույն ժամանակ, տպավորությունն այնպիսին է, որ ամերիկացիներն իրենց հաշվարկներում թույլ են տվել նաեւ բացթողումներ, որոնք արտահայտվեցին նախագահ Բուշի այն խոսքերում, թե Ռուսաստանի գործողությունները «ոչ աղեկվատ ուժի կիրառում են»: Այս ձեւակերպումը տիրաժավորվեց եւ դարձավ տարբեր արեւմտյան քաղաքական գործիչների հիմնական գնահատականը կատարվածի առնչությամբ: Այսինքն՝ հնարավոր է, որ ԱՄՆ ռազմաքաղաքական գործողությունները պլանավորող մարմիններն իրենց մշակումներում գուցե եւ թերագնահատել էին Ռուսաստանի պատասխան քայլերի ծավալը եւ կոշտությունը: Հնարավոր է, որ դա պայմանավորված է այն հանգամանքով, որ Միացյալ Նահանգների ներկայիս վարչակազմը ձեւավորվել է դեռեւս 2000թ., այսինքն՝ միաբեւեռ համակարգի պայմաններում, երբ Ռուսաստանը երկրորդական դերակատարում ուներ գլոբալ հարթությունում:

Այժմ համառոտ ներկայացնենք պատերազմի արդյունքների հնարավոր ազդեցությունը ՌԴ-ի եւ Հայաստանի վրա:

Ինչպես նշեցինք վերը, ամերիկյան կողմի համար Ռուսաստանի վճռականությունը եւ ռազմական գործողությունների մասշտաբը՝ Կոդորի կիրճում վերահսկողության հաստատումը, բուն Վրաստանի տարածքում բնակավայրերի ժամանակավոր գրավումը, Հարավային Օսիայի ու Աբխազիայի արագ ճանաչումը, գուցե եւ սպասելի չէին: Միեւնույն ժամանակ, չպետք է կասկածել, որ ռուսական կողմն ուներ ռազմական գործողությունների իր մշակած սցենարը եւ սեփական պատկերացումները դրանց զարգացման ու հետեւանքների մասին: Որոշ վերլուծաբաններ հակված են անգամ այն վարկածին, որ ռուսական կողմը մտածված թույլ տվեց Ցխինվալի զանգվածային հրետակոծումը եւ վրացական ՁՈւ առաջխաղացումը, որպեսզի ներկայացնի հանրությանն իր գործողությունները՝ որպես օսերին «հունամիտար աղետից» փրկելու նպատակով վարած «արդարացի» պատերազմ:

Բոլոր պարագաներում ՌԴ կոշտ պատասխանը նրան որոշակի քաղաքական դիվիդենտներ բերեց, որոնցից նշենք հետեւյալները.

1. Պատերազմի նման սցենարը շահեկան էր ՌԴ-ի համար ներքաղաքական առումով. վերջին ժամանակահատվածում առաջին անգամ այդ երկիրն արագ եւ հաղթանակող պատերազմ վարեց, ինչը ձերբազատեց ռուսաստանյան հանրությանը պարտվողական բարոյություններից, միավորեց հասարակությունը եւ պատկերավոր ցուցադրեց Պուտին – Մեդվեդեւ տանդեմի քաղաքական կուրսի արդյունավետությունը:

2. Պատերազմը շահեկան էր ՌԴ-ի համար հետխորհրդային տարածքում իր վարկանիշի բարձրացման տեսանկյունից: Այս տերության դերակատարումը հետխորհրդային տարածքում ավելի է մեծանալու. այդ հանգամանքը, մասնավորապես, արտահայտվեց Ուկրաինայում քաղաքական իշխող կոալիցիայի փլուզումով:

3. Պատերազմը թուլացրեց Ռուսաստանի ավանդական մրցակից ԱՄՆ հեղինակությունը գլոբալ եւ տարածաշրջանային հարթություններում:

4. ԱՄՆ վարկաբեկումը, չնայած ՌԴ–ԵՄ ծագած լարվածությանը, մեծացրեց մասնավորապես «հին» Եվրոպայի եւ ԱՄՆ տարածայնությունները, քանի որ ակնհայտ դարձավ, որ ի տարբերություն Առաջին սառը պատերազմի՝ ներկայիս Եվրոպացիներն առանձնապես չեն ձգտում պատերազմել Ռուսաստանի դեմ՝ հանուն ամերիկյան շահերի:

* * *

Եթե Առաջին սառը պատերազմում լուրջ ռազմական բախումները հիմնականում ընթանում էին Չարավարեւելյան եւ Կենտրոնական Ասիայում, ապա նոր ժամանակաշրջանի առաջին լուրջ պատերազմը տեղի ունեցավ Չայաստանի հյուսիսային սահմանների անմիջական հարեւանությամբ: Արդյունքում, ըստ որոշ գնահատականների, ՀՀ տնտեսական վնասները դրա հետեւանքով կազմեցին մոտ \$ 0.5 մլրդ:

Միեւնույն ժամանակ, պատերազմական գործողություններից հետո ձեւավորված իրադրությունը Չայաստանի համար, մարտավարական առումով, թերեւս կարելի է բարենպաստ գնահատել: Այն սթափեցնող ազդեցություն գործեց Ադրբեջանի ղեկավարության վրա (դրա մասին են վկայում այդ երկրի քաղաքական գործիչների եւ վերլուծաբանների ելույթները), քանի որ հիշեցրեց, որ ցանկացած ռազմական գործողություն կարող է ընթանալ չնախանշված սցենարով:

Ըստ մեզ, ԼՂՀ կարգավիճակի հետ կապված խնդիրներում անվտանգության գործոնը պետք է գերակայի «կարգավիճակի» եւ ճանաչման (այն էլ՝ միակողմանի) գործոնի նկատմամբ: Կարգավիճակը լուծումներ է ստանում աշխարհաքաղաքական խոշոր միավորների քաղաքական

կամքի առկայության դեպքում, ինչը երեւաց Կոսովոյի, Չարավային Օսիայի եւ Աբխազիայի պարագայում, մինչդեռ՝ ԼՂՀ դեպքում ներկայիս status quo-ն կարծես ձեռնտու է խոշոր տերություններից շատերին: Այլ խնդիր է, որ անհրաժեշտ է նախապես պատրաստել իրավաբանական, դիվանագիտական եւ ռազմաքաղաքական գործողությունների լավ մշակված «փաթեթներ»՝ տարածաշրջանային ամենատարբեր զարգացումների պարագայում կիրառելու համար:

Հատուկ շեշտենք, որ նման փաթեթներում իրենց մասը պետք է ունենան նաեւ Ջավախքի եւ վրաստանաբնակ հայության խնդիրները: Նկատենք նաեւ, որ ՀՀ-Թուրքիա հարաբերությունների որոշակի կարգավորման ուղղությամբ Հայաստանի քաղաքական ղեկավարության կատարած վերջին քայլերն արդեն իսկ նպաստեցին ՀՀ եւ ԼՂՀ անվտանգության բարձրացմանը ստեղծված ռազմական լարվածության պայմաններում:

ԷՆԵՐԳԵՏԻԿ ԳՈՐԾՈՆԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ՝ ՎԵՐՋԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ Սեւակ Սարուխանյան

Վրաստանի ռազմական գործողությունները Հարավային Օսիայի դեմ եւ Ռուսաստանի կոշտ հակահարվածը լուրջ ազդեցություն կարող են ունենալ Հարավային Կովկասում իրականացվող էներգետիկ նախագծերի վրա: Ստորեւ ներկայացնում ենք մեր դիտարկումները տարածաշրջանային էներգետիկ ծրագրերի վրա ճգնաժամի հնարավոր ազդեցության վերաբերյալ:

Բաքու – Ջեյհան

Օգոստոսի 8-ին սկսված վրաց-ռուսական ռազմական բախման՝ էներգետիկ քաղաքականության տեսակետից ամենամեծ հետաքրքրություն ներկայացնող խնդիրը Բաքու–Ջեյհան նավթատարի գործունեության հետ է կապված: Բավական անհասկանալի ծեւով, պատերազմն սկսվելուց 3 օր առաջ՝ օգոստոսի 5-ին, պայթյուն տեղի ունեցավ Բաքու–Ջեյհան նավթատարի թուրքական հատվածում: Արդեն օգոստոսի 6-ին քրդական աշխատավորական կուսակցությունը հայտարարեց, որ ինքն է պայթյունի կազմակերպիչը եւ իր քայլը բացատրեց հետեւյալ կերպ. «Մենք գտնում ենք, որ Թուրքիայի տնտեսական ռեսուրսների դեմ ուղղված նման գործողությունները, զսպիչ նշանակություն պետք է ունենան Թուրքիայի համար այն պատերազմում, որը նա մղում է քրդական ժողովրդի վերացման նպատակով»:

Ուշագրավ է այն փաստը, որ թուրքական ՆՏՎ հեռուստաընկերությունը, հղում կատարելով թուրքական ոստիկանության իր աղբյուրների վրա, նշում է, որ ահաբեկչությունն ընդհանրապես չի դիտարկվում որպես պայթյունի պատճառ, քանի որ առկա են նավթատարի աշխատանքի խափանման ակնհայտ տեխնիկական պատճառներ: Սակայն արդեն օգոստոսի 7-ին թուրքական ՁԼՄ-ն հանդես են գալիս ահաբեկչության հետ կապված վարկածի մասին հայտարարություններով, որոնք չեն հերքվում թուրքական իշխանությունների կողմից:

Ինչեւէ, ամենակարեւորն այն է, որ ռուս-վրացական փաստացի պատերազմից 3 օր առաջ Ադրբեջանը կասեցնում է նավթի արտահանումը

Բաքու–Ջեյհան նավթատարով: Սա կարող է հասարակ զուգահեռություն լինել, սակայն հնարավոր է, որ ոչ այնքան պարզ պատճառներով տեղի ունեցած պայթյունը ստիպեց դադարեցնել նավթամուղի գործունեությունը եւ հնարավորություն տվեց Թուրքիային ու Ադրբեջանին տարանջատել նավթամուղի աշխատանքը Վրաստանի տարածքում ծավալված պատերազմական գործողություններից:

Ուշադրության է արժանի նաեւ այն հանգամանքը, որ ռուսական ռազմուժը, որը պատերազմի առաջին օրերին լուրջ հարված հասցրեց ոչ միայն վրացական ռազմական օբյեկտներին, այլ նաեւ տնտեսական ենթակառուցվածքին, խուսափեց հարվածել Բաքու–Ջեյհան նավթատարին, որն, անկասկած, Վրաստանի տնտեսական հզորության կարեւորագույն օղակներից մեկն է: Դժվար է բացատրել ռուսական կողմի այս քայլը, սակայն թուրքական կողմի ավելի քան հավասարակշռված մոտեցումը ռուս-վրացական առճակատմանը կարող է հուշել այն մասին, որ Մոսկվայի եւ Թբիլիսիի հնարավոր բախման դեպքում Բաքու–Ջեյհան նավթատարի անվտանգության մասին ռուս-թուրքական պայմանավորվածություններ են եղել: Այս դեպքում Թուրքիայի տարածքում նավթատարի պայթյունը, հնարավոր է, նավթամուղի անվտանգությունն ապահովելուն ուղղված մի քայլ է եղել, քանի որ փաստացի հենց այդ պայթյունը պատերազմի օրերին կասեցրեց նավթի արտահանումը եւ բացառեց վրացական կողմից նավթատարի վրա դիվերսիաներ իրականացնելու հնարավորությունը, որոնց մեղավոր պետք է ներկայացվեր ռուսական կողմը:

Բաքու–Էրզրում եւ Տրանսկասպյան գազատարներ

Բաքու–Էրզրում գազատարը պատերազմի օրերին տեխնիկապես եւ ֆիզիկապես բոլորովին չվնասվեց եւ շարունակեց կայուն գործունեությունը: Սակայն պատերազմի եւ Վրաստանի անկայունության արդյունքում գազատարը մեծ կորուստներ կարող է կրել՝ կապված հեռանկարային զարգացման ծրագրերի իրականացման հետ: Վերջին կես տարվա ընթացքում նկատվող թուրքմենա-ադրբեջանական հարաբերությունների ջերմացումը բավական լավ հնարավորություններ էր ստեղծել Տրանսկասպյան գազատարի կառուցման նախագծին Թուրքմենստանի միացման համար: Տրանսկասպյան գազատարը մաս պետք է կազմի «Նաբուկկո» գազատարային համակարգի, որը Կասպիցի եւ Կենտրոնական Ասիայի բնական գազը զգալի ծավալներով պետք է հասցնի ԵՄ՝ տարանցման ճանապարհից դուրս թողնելով Ռուսաստանի տարածքը եւ ռուսական «Գազպրոմի» սեփականություն հանդիսացող գազատրանսպորտային համակարգը:

2008թ. հուլիսի սկզբին Ռուսաստանի նախագահ Դ.Մեդվեդևի այցը Բաքու նշանավորվեց ռուսական կողմից Ադրբեջանին էներգետիկ ոլորտում նոր առաջարկության ներկայացմամբ: Ռուսաստանը պատրաստակամություն հայտնեց ադրբեջանական գազի ողջ արտահանվող ծավալները գնել եվրոպական գներով, եթե Բաքուն որոշի դրանք վաճառել Ռուսաստանին: Ռուսաստանի նախագահի առաջարկը ոչ միայն անսպասելի, այլ նաև տարօրինակ կարող է թվալ: Բանն այն է, որ Ադրբեջանն արդեն իսկ մասնակցում է բազմամիլիարդ արժողության «Նաբուկկո» ծրագրի իրականացմանը, փաստացի գործում է Բաքու–Թբիլիսի–Էրզրում գազատարը, եւ, բացի այս ամենից, էներգետիկ գործունը կարելու տեղ է զբաղեցնում Ադրբեջան–Արեւմուտք ռազմավարական երկխոսությունում: Այս պայմաններում անհասկանալի կարող է թվալ, թե ինչու Ադրբեջանը պետք է ընդունի Ռուսաստանի՝ թեկուզ եւ ֆինանսապես գրավիչ, առաջարկությունը:

Սակայն իրավիճակն այսօր կտրականապես տարբերվում է նրանից, ինչ կար երկու ամիս առաջ: Վրաստանը Ռուսաստանի հետ բախման արդյունքում ոչ միայն կորցրել է Հարավային Օսիան եւ Աբխազիան, այլև ձեռք է բերել պոտենցիալ եւ երկարաժամկետ կոնֆլիկտային գոտու կարգավիճակ, ինչը լուրջ վնաս է հասցնելու Թբիլիսիի կողմից վարվող էներգետիկ քաղաքականությանը: Այսօր արդեն Ռուսաստանի առաջարկությունը Բաքվին այնքան էլ տարօրինակ չի թվում: Այդ առաջարկությունների օգտին է խոսում նաև ԱՄՆ փոխնախագահ Ռ.Չեյնիի սեպտեմբերի 4-ի այցը Բաքու, որը, ինչպես նշում է ռուսական «Կոմերսանտը», հղում կատարելով Ադրբեջանի նախագահի աշխատակազմի՝ իր աղբյուրների վրա, տապալվել է, քանի որ Ի.Ալիևը հրաժարվել է մասնակցել Ռուսաստանը մեկուսացնող էներգետիկ նախագծերի իրականացման ակտիվացմանը Կասպիցում:

Եվ եթե անգամ Ադրբեջանը չընդունի Մոսկվայի առաջարկությունը, միեւնույն է, վրաստանյան իրավիճակը ռուսական կողմին նշանակալից դրական ձեռքբերումներ կտա: Դրանցից ամենակարևորը, հավանաբար, այն է, որ թե՛ Ղազախստանը, թե՛ Թուրքմենստանը կսկսեն ավելի սառը վերաբերվել Հարավային Կովկասի տարածքով անցնող էներգետիկ տրանսպորտային ուղիներին: Արդեն իսկ ակնհայտ երեւում են այդ սառնության դրսևորումները: Սեպտեմբերի 1-ին Ղազախստանի վարչապետը հայտարարեց, որ իր երկիրը կսկսի նավթ արտահանել Բաքու–Ջեյհան նավթատարով ոչ թե 2009-ից, ինչպես նախկինում ծրագրվել էր, այլ 2011–2012թթ.: Ինչ վերաբերում է Տրանսկասպյան գազատարին, ապա դրա կառուցման նախագիծն էլ ավելի մշուշոտ է դառնում:

Որպես Վրաստանում տեղ գտած զարգացումների արդյունք պետք է դիտարկել նաեւ Իրանի դիրքերի որոշակի ամրապնդումը Կասպիցի էներգետիկ քաղաքականության ոլորտում: Թուրքմենական կողմը համաձայնել է վերականգնել Իրանի հետ գազային համագործակցությունը, որի արդյունքում աշնանն ամբողջությամբ կվերականգնվի գազի արտահանումը Իրան եւ ապա Թուրքիա: Իսկ սեպտեմբերի 5-ին Թուրքիայի էներգետիկայի նախարար Խ.Գյուլերը Աշգաբադում Թուրքմենստանի նախագահի հետ հանդիպումից հետո հայտարարեց, որ Թուրքիան պատրաստվում է Թուրքմենստանում կառուցել մի քանի գազապահեստներ, որոնցում պետք է կուտակվեն ձմռանը Իրանի տարածքով Թուրքիա արտահանվող գազի պաշարները:

Չեռնուլթյուն

Վրաց-ռուսական հակամարտությունը, այսպիսով, դառնում է մի գործոն, որը լուրջ ազդեցություն կթողնի տարածաշրջանային էներգետիկ նախագծերի իրականացման վրա եւ կբերի ռուսական դիրքերի ամրապնդմանը Չարավային Կովկասում ու Կասպիցի շրջանում: Սա նշանակում է վերջին տարիների ամերիկյան ձեռքբերումների տապալում եւ մատնանշում է ռուսական դիրքերի հետագա ամրապնդումը ոչ միայն այս տարածաշրջանում, այլ նաեւ ԵՄ-ում, որն էլ հենց Կասպիցի եւ Կենտրոնական Ասիայի նավթագազային պաշարների հիմնական սպառողն է:

ԻՐԱՎԻՃԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ Սարգիս Հարությունյան

Այն, ինչի հասավ Ռուսաստանը ռուս-վրացական հնգօրյա պատերազմի արդյունքում, անշուշտ, կարելու է:

❖ Չնայած Ադրբեջան, Վրաստան եւ Ուկրաինա կատարած այցերից հետո սեպտեմբերի 7-ին Իտալիայում ԱՄՆ փոխնախագահ Դիք Չեյնին՝ հետախուզության ոլորտում եվրոպացի բարձրաստիճան պաշտոնյաների հետ հանդիպելուց հետո հայտարարեց, թե ՆԱՏՕ-ի անդամ երկրները կողմ են դաշինքին Վրաստանի եւ Ուկրաինայի անդամակցությանը, սակայն իրականությունն այն է, որ Վրաստանի դեմ ռազմական գործողություններով Ռուսաստանը հասավ տվյալ հարցում եվրոպայում իր կողմնակիցների թվաքանակի ավելացմանը: Օրինակ, հարավօսական դեպքերի առնչությամբ եվրոպացի մի շարք գործիչների կողմից Վրաստանի նախագահ Սահակաշվիլու հասցեին հնչող քննադատությունը պետք է նախ եւ առաջ հասկանալ որպես ՆԱՏՕ-ին Թբիլիսիի ենթադրվող անդամակցության հարցում դիրքորոշման արտահայտում: Ընդհանուր հետեւությունն այս է՝ ռուս-վրացական հնգօրյա պատերազմի միջոցով Մոսկվան հասավ նրան, որ դեկտեմբերին դաշինքի անդամ երկրների արտգործնախարարները Վրաստանի հետ չեն սկսի MAP-ը (Membership Action Plan, Անդամակցության գործողությունների ծրագիրը), որովհետեւ գրեթե բոլոր եվրոպական երկրները չեն ցանկանում կամ չեն կարող Թբիլիսիին անվտանգության երաշխիքներ տալ Ռուսաստանի դեմ:

❖ Երկրորդ, պատերազմի միջոցով Ռուսաստանը խնդիր ուներ ցույց տալ հետխորհրդային բոլոր երկրներին (անգամ՝ ՆԱՏՕ-ի անդամ բալթյան երեք հանրապետություններին), որ անվտանգության ոլորտում ԱՄՆ ու եվրամիության տված երաշխիքները չեն գործում¹: Այս

¹ Պատահական չէ, որ օգոստոսին Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը հարկ համարեց հանդես գալ հայտարարությամբ, թե ՆԱՏՕ-ն կապահովի էստոնիայի անվտանգությունը: Այլ կերպ ասած՝ նման հայտարարության անհրաժեշտության խնդիր էր ծագել առնվազն էստոնական կողմի մոտ, թեւ այդ երկիրը դաշինքի անդամ է:

հաղորդագրությունն, անշուշտ, առաջին հերթին ուղղված է Կիելին², սակայն առաջնային հասցեատերերի թվում են նաև Ադրբեջանն ու Մոլդովան: Կրեմլում ցանկանում են, որպեսզի այդ երկրները վերանայեն իրենց մոտեցումներն արտաքին քաղաքականության ոլորտում, եւ փաստն այն է, որ այս գործընթացը սկսվել է: Այլ հարց է, թե ի վերջո ուր կտանի այն:

❖ Երրորդ, ռուս-վրացական պատերազմով Մոսկվան նպատակ ուներ վերականգնել իր գինված ուժերի իմիջը: Վերջին անգամ ռազմական նմանատիպ ակցիա Մոսկվան իրականացրել էր մոտ 30 տարի առաջ՝ Աֆղանստան ներխուժելով, եւ ԽՍՀՄ փլուզումից հետո միջազգային հարաբերություններում ռուսական քաղաքականության արդյունավետությունը բարձրացնող, փաստորեն, միակ միջոցը Կրեմլի կողմից էներգետիկ քաղաքականության կիրառումն էր: Այժմ Ռուսաստանն ավելացնում է նոր բաղադրիչ՝ իր ռազմական կարողությունների հնարավորությունը, ու եթե ոչ աշխարհի հեռավոր մասերում, ապա հետխորհրդային տարածքում այն կունենա իր նշանակությունը:

❖ Թեեւ Սարկոզի–Մեդվեդեւ պայմանավորվածությունների արդյունքում Մոսկվան ի վերջո համաձայնեց դուրս բերել իր զորամիավորումները Վրաստանից եւ կրճատել ռազմական ներկայությունն Աբխազիայի ու Հարավային Օսիայի շուրջ առկա անվտանգության գոտիներում³, սակայն Մոսկվայի համար կարելուրն այստեղ այն է, որ հարցերը լուծվում են Ռուսաստան–Եվրամիություն ձեւաչափում: Խնդիր կա ցույց տալու, որ ո՛չ ՆԱՏՕ-ի ձեւաչափը, ո՛չ էլ ԱՄՆ քաղաքականությունը

² Օրինակ, Սեւաստոպոլի պատկանելության վերաբերյալ ռուս բարձրաստիճան պաշտոնյաների դեռեւս այս մայիսից հնչող հայտարարություններն այժմ լրիվ այլ կերպ են դիտարկվում: Այդ առումով, Ուկրաինայում նարնջագույն կոալիցիայի փլուզումը եւ վարչապետ Յուլյա Տիմոշենկոյի ավելի ռուսամետ կեցվածք ընդունելը ոչ միայն պետք է կապել Ուկրաինայի գալիք տարվա նախագահական ընտրությունների հետ, այլեւ պետք է ընկալել որպես մի իրավիճակ, ինչը հնարավոր է, որ կանխեց լուրջ սրացումները Ղրիմում եւ Արեւելյան Ուկրաինայում:

³ Համաձայն Սարկոզի–Մեդվեդեւ սեպտեմբերի 8-ի պայմանավորվածության, մինչեւ ս.թ. սեպտեմբերի 15-ը Ռուսաստանը պետք է դուրս բերեր իր զորամիավորումները Վրաստանի տարածքից՝ Փոթի–Սեմակի հատվածից, իսկ մինչեւ հոկտեմբերի 11-ը կրճատեր ռազմական ներկայությունն Աբխազիայի ու Հարավային Օսիայի շուրջ առկա անվտանգության գոտիներում:

չեն կարող դա անել⁴: Ընդ որում, Մոսկվան ԵՄ-ի հետ հաջողությունների հասավ նրա առանցքային երկրների հետ առանձին հարաբերությունների միջոցով: Հնարավոր է, որ այս վիճակին ձգտում էին Փարիզում եւ Բեռլինում՝ բարձրացնել սեփական քաղաքականությունների կշիռն աշխարհում, բայց սա նպատակ էր, որը դրվել էր նաեւ Մոսկվայում:

Ներկայացված հետեւությունները, սակայն, ակտուալ էին օգոստոսի վերջի եւ սեպտեմբերի առաջին տասնօրյակի համար: Անշուշտ, ընդհանուր իրադրությունը Հարավային Կովկասում գտնվում էր ակտիվ ձեւափոխման փուլում, եւ դրա կարեւոր ցուցիչներն են Վրաստանի շուրջ շարունակվող զարգացումները, էներգետիկ հարցերի վերանայումը Բաքվում եւ նորությունները հայ-թուրքական հարաբերություններում: Բայց գլխավոր կետը, որը շարունակում է բաց մնալ եւ որն ակտուալ է լինելու առաջիկա ամիսներին, հետեւյալն է՝ ի՞նչ տեսք է ունենալու տարածաշրջանը հաջորդ միջնաժամկետ հեռանկարում:

Այդ իմաստով, կարեւոր ենք համարում դիտարկել հետեւյալ չորս հանգուցային ուղղությունները, որոնք պետք է որոշիչ դառնան նոր իրավիճակի ձեւավորման գործում.

- ❖ իրավիճակի զարգացումը Վրաստանի շուրջ,
- ❖ Կասպիցի ու տարածաշրջանային էներգետիկ շարժերի խնդիրը,
- ❖ ընթացող հայ-թուրքական բանակցությունները,
- ❖ ամերիկա-իրանական պայմանավորվածությունների ընթացքը:

Իրավիճակի զարգացումը Վրաստանի շուրջ

Իրականում Վրաստանի շուրջ ստեղծված իրավիճակի վերաբերյալ Ֆրանսիայի ու Ռուսաստանի նախագահների միջեւ կայացած երկու պայմանավորվածությունները պետք է ավելի շատ ընկալել որպես անվտանգության ոլորտում Մոսկվայի, Փարիզի ու Բեռլինի միջեւ ձեւավորվող համագործակցություն, կամ՝ արդեն իսկ կայացած պայմանավորվածություն: Այլ կերպ ասած, բուն Վրաստանի հարցի հետ կապված՝ դա, անշուշտ, իր նշանակությունը կունենա (այն ամրագրում է ստեղծված նոր status quo-ն), բայց այն չի տալիս գլխավոր հարցի պատասխանը, թե ինչ

⁴ Պատահական չէ, որ Սարկոզի-Մեդվեդեւ սեպտեմբերի 8-ի պայմանավորվածությամբ՝ Աբխազիայի ու Հարավային Օսիայի շուրջ առկա անվտանգության գոտիներում պետք է մինչեւ ս.թ. հոկտեմբերի 1-ը տեղաբաշխվեն հենց ԵՄ դիտորդները՝ առնվազն 200 հոգի:

է լինելու հետո: Այդ առումով երկու կարեւոր հարցեր դեռեւս մնում են բաց:

❖ Թեւեւ Ռուսաստանը ռազմական գործողություններով եւ Աբխազիայի ու Չարավային Օսիայի անկախությունների ճանաչմամբ հասավ Վրաստանի ու նախագահ Սահակաշվիլու վարչակազմի զգալի թուլացմանը, սակայն փաստն այն է, որ Թբիլիսիում շարունակում է իշխել Մ.Սահակաշվիլին: Պարզ է, որ Մոսկվայի բուն նպատակը Աբխազիայի ու Չարավային Օսիայի անկախությունների ճանաչումը չէր, իսկ մյուս կողմից՝ ռուսական կողմին ներկայում հատկապես ձեռք չի տալիս Սահակաշվիլու մնալն իշխանության ղեկին:

❖ Հասկանալի է, որ ռուս-վրացական հնգօրյա պատերազմից հետո Վրաստանի նավահանգիստներ ԱՄՆ ռազմական նավերի ժամանումը կապված է նաեւ Միացյալ Նահանգներում ընթացող նախագահական կամպանիայի հետ, եւ Բուշ-կրտսերի վարչակազմի կողմից խնդիր կա ձեռնարկել սեփական իմիջը բարձրացնող ակցիաներ, սակայն տակավին պարզ չէ, թե արդյոք այդ ակցիան կավարտվի ամերիկյան նախագահական ընտրություններից հետո⁵: Այլ կերպ ասած, հայտնի չէ, թե որն է Վրաստանի ու Չարավային Կովկասի շուրջ ներկայում ձեւավորվող իրադրության վերաբերյալ Վաշինգտոնի հեռանկարային մոտեցումը: Հավանական է, որ դա հայտնի կդառնա Սպիտակ տուն նոր վարչակազմի գալուց հետո միայն:

Բանակցությունները Բաքվում

Պատահական չէ, որ ռուս-վրացական պատերազմից հետո Վաշինգտոնում որոշեցին փոխնախագահ Չեյնիի մակարդակով պատվիրակություն ուղարկել Ադրբեջան: Ճիշտ է, ԱՄՆ փոխնախագահն այցելեց նաեւ Վրաստան եւ Ուկրաինա, սակայն ուշադրություն գրավեց այն հանգամանքը, որ նրա առաջին հանգրվանը Բաքուն էր, թեւեւ ռազմական գործողություններն ու քաղաքական լարվածությունը չեն առնչվել Ադրբեջանին, իսկ որպէս անկայունության հաջորդ հավանական կետ նշվում է Ուկրաինան:

⁵ Այդ հարցը հատկապէս ցցուն դարձավ, երբ սեպտեմբերի 9-ին Պենտագոնի ներկայացուցիչը հայտարարեց, թե ամերիկյան ռազմական գերատեսչությունն ավարտել է Վրաստան հումանիտար օգնություն տեղ հասցնելու իր առաքելությունը: Թբիլիսիին ամերիկյան հումանիտար օգնության տրամադրումը կշարունակվի, սակայն Պենտագոնի ներկայացուցիչը որեւէ կոնկրետ բան չէր ասել, թե ԱՄՆ ռազմաճակատներն ինչքան են մնալու Սեւ ծովում:

Սեպտեմբերի 5-ին ռուսական «Коммерсант» պարբերականը գրեց, թե Բաքվում Չեյնիին մերժել են՝ իրենց հավանությունը տալ անդրկասպյան գազամուղի կառուցման հարցում, սակայն էլ ավելի կարելու է այն տեղեկությունը, որ ներկայում ադրբեջանական կողմը Ռուսաստանի հետ բանակցություններ է վարում՝ Թուրքիայի կողմից առաջարկված «Հարավային Կովկասում կայունության եւ համագործակցության պլատֆորմի», իսկ այլ աղբյուրների ներկայացմամբ՝ նաեւ Ղարաբաղի խնդրում բանակցությունների նոր ձեւաչափ ստեղծելու (առաջարկությունն իբր եկել է Մոսկվայից) հարցերով:

Ներկայացվածը, Բաքու Դիք Չեյնիի այցելության հետ միասին, իրականում խոսում է այն տարբերակի օգտին, որ Ադրբեջանը կրկին ներգրավվել է իր էներգետիկ կարողություններին առնչվող բանակցությունների մեջ:

Հայ-թուրքական բանակցությունները

Թուրքիայի նախագահի այցելությունը Երեւան Անկարայի համար կարող էր նշանակություն ունենալ միայն այն պարագայում, եթե այնտեղ նոր որոշման հանգած լինեին հայ-թուրքական սահմանի վերաբացման հարցում: Հայոց ցեղասպանության հարցի շուրջ կողմերը ներկայում չեն կարող պայմանավորվել, ուստի ճշմարտությանը մոտ է այն տեղեկությունը, թե Երեւանում այդ թեման չի քննարկվել: Այլ հարց է Ղարաբաղի խնդիրը, սակայն քիչ հավանական է, որ մինչեւ Վրաստանի շուրջ ստեղծված իրավիճակի հստակեցումը Երեւանն ու Բաքուն լուրջ «առաջընթաց» ունենան հարցի կարգավորման ուղղությամբ:

Հետեւաբար, Գյուլի այցելությունը Երեւան առաջին հերթին նշանակում է գործընթացի սկիզբ: Այն դեռեւս երաշխիք չէ, որ հայ-թուրքական սահմանը մոտ ապագայում կբացվի, սակայն նշանակում է, որ սահմանը բացելու հնարավորության վերաբերյալ որոշումը Անկարայում կայացվել է: Հայաստանի հետ հետագա հարաբերությունների հարցն ամենակարելու կետն է Հարավային Կովկասին վերաբերող Անկարայի նոր նախաձեռնության մեջ, եւ առանց Երեւանի հետ հարաբերությունների կարգավորման՝ թուրքական կողմի համար անհիմաստ է դառնում հանդես գալ նման առաջարկով: Ողջ հարցն այն է, թե ինչ են ցանկանում Երեւանից:

Ամերիկա-իրանական պայմանավորվածություններ

Օգոստոսի 28-ին հայտնի դարձավ, որ Իրաքում գործող ու Իրանի աջակցությունը վայելող 60 հազարանոց «Մահդիի բանակը» դադարեցնում է գործունեությունը եւ շարժումը ձեւափոխվում է կրոնական-մշակութային միության: Շատ չանցած, սեպտեմբերի 4-ին, Իրաքի կառավարությունը հայտարարեց, թե փակվում է իր տարածքում գործող, Թեհրանի վարչակարգին ընդդիմադիր իրանական «Մոջահեդդին-է-խալք» կազմակերպության ճամբարները:

Ակնհայտ է, որ այստեղ գործ ունենք փոխադարձ պայմանավորվածությունների հետ: Եթե Թեհրանի հետ Վաշինգտոնը ձեռք է բերում պայմանավորվածություն եւ դադարում է հակամարտության ուղեգիծը⁶, ուրեմն չպետք է բացառել, որ Վրաստանի ուղղությամբ ԱՄՆ-ը պատրաստվում է գործուն քայլերի:

⁶ Ուշագրավ է այն հանգամանքը, որ ռուս-վրացական պատերազմին հաջորդած շաբաթների ընթացքում արեւմտյան մամուլում եւ քաղաքական հայտարարությունների շարքում նվազագույնի է հասցված իրանական թեման:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՆՈՐ ՆԱԽԱՋԵՌՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ Ռուբեն Սաֆրաստյան

Օգոստոսյան հնգօրյա պատերազմը Ռուսաստանի եւ Վրաստանի միջեւ հանգեցրեց Հարավային Կովկասում կարելուր տեղաշարժերի: Դրանց վերջնական արդյունքի մասին դեռեւս վաղ է խոսել, սակայն արդեն ակնհայտ է հիմնական միտումը՝ Ռուսաստանի աշխարհաքաղաքական դիրքերի ուժեղացում տարածաշրջանում: Ցուցաբերելով քաղաքական կամք ու վճռականություն եւ հեշտությամբ հաղթանակ տանելով այդ պատերազմում՝ Ռուսաստանը վերահաստատեց իր դերակատարումը Հարավային Կովկասում՝ որպես ուժի գլխավոր կենտրոն, որը նա կորցրել էր անցյալ դարի վերջին տասնամյակի ընթացքում: Նրան ոչ միայն հաջողվեց նպաստել տարածաշրջանում երկու նոր պետության՝ Հարավային Օսիայի եւ Աբխազիայի առաջացմանը, այլ նաեւ «օրինականացնել» իր զինված ուժերի տեղակայումը նրանց տարածքում: Վրաստանը, որ Մ.Սահակաշվիլու նախագահության շրջանում դարձել էր Արեւմուտքի, գլխավորապես ԱՄՆ-ի հիմնական դաշնակիցը տարածաշրջանում, ոչ միայն ունեցավ տարածքային անդառնալի կորուստներ, այլեւ կորցրեց իր զինված ուժերի մարտունակությունը, ռազմական ենթակառուցվածքների գործունակությունը:

Հարավային Կովկասի անմիջական հարեւան պետություններից Թուրքիան առաջինն էր, որն արագ կողմնորոշվելով տարածաշրջանում տեղի ունեցող աշխարհաքաղաքական բնույթի փոփոխությունների մեջ՝ արձագանքեց դրանց: Այդ արձագանքն ի հայտ եկավ Հարավային Կովկասում Կայունության ու համագործակցության պլատֆորմի (ԿՀՊ) ստեղծման վերաբերյալ նախաձեռնության տեսքով: Այդ նախաձեռնության հեղինակն է Արդարություն ու զարգացում կուսակցության կառավարման շրջանի երկրի արտաքին քաղաքական կուրսի գլխավոր ճարտարապետ, Ռ.Թ. Էրդողանի մերձավոր խորհրդական, պրոֆեսոր Ահմետ Դավուդօղլուն, որը համարվում է Թուրքիայի առաջատար աշխարհաքաղաքագետներից եւ ռազմավարներից մեկը: Մասնավորապես, նա հեղինակն է «Թուրքիայի ռազմավարական խորությունը» անվանումը կրող ինքնատիպ աշխարհաքաղաքական հայեցակարգի, որի նպատակն է

տեսականորեն հիմնավորել Թուրքիայի շուրջ ազդեցության ոլորտներ ստեղծելուն ուղղված աշխարհառազմավարության անհրաժեշտությունը՝ այդպիսով վերահաստատելով նրա բացառիկ բարենպաստ աշխարհաքաղաքական դիրքից եւ կայսերական փառահեղ անցյալից բխող առավելություններն իր հարեւան պետությունների նկատմամբ:

Թուրքիայի առաջարկը սկզբնական փուլում նախատեսում էր այդ նոր կառույցի մեջ, բացի երեք հարավկովկասյան պետություններից, Թուրքիայից ու Ռուսաստանից, ընդգրկել նաեւ ԱՄՆ-ին, սակայն հետագայում, Ռուսաստանի եւ Թուրքիայի ղեկավարների միջեւ Մոսկվայում տեղի ունեցած քննարկումների արդյունքում, ընտրվեց 3+2 բանաձեւը՝ Ադրբեջան, Հայաստան, Վրաստան եւ Ռուսաստան ու Թուրքիա:

Նմանատիպ առաջարկով, հիմնված 3+3 բանաձեւի վրա (Ադրբեջան, Հայաստան, Վրաստան + Ռուսաստան, Թուրքիա, ԱՄՆ) Թուրքիան հանդես էր եկել դեռեւս 1999 թվականին, սակայն ոչ Ռուսաստանը, ոչ էլ ԱՄՆ-ը նրան չօժանդակեցին, եւ այդ առաջարկը հետագա ընթացք չունեցավ:

Այս անգամ իրադրությունն այլ է. Թուրքիան ստացել է դրական արձագանք պլատֆորմի բոլոր հավանական մասնակիցներից, բացի Վրաստանից: Վերջինս հրաժարվում է մասնակցել Ռուսաստանի հետ համատեղ որելիցե նախաձեռնության, քանի դեռ իր տարածքում գտնվում են ռուսական զորքեր, ինչը քաղաքական առումով միանգամայն հասկանալի է: Ուշագրավ է, որ Ադրբեջանը Հայաստանի մասնակցության վերաբերյալ նմանատիպ առարկություններով պաշտոնապես հանդես չի եկել: Հասկանալի է, որ դա արդյունք է Թուրքիայի ուժեղ ճնշման:

Սակայն աշխարհաքաղաքական տեսանկյունից շատ ավելի կարեւոր է, որ Թուրքիայի նախաձեռնությանն աջակցում է Ռուսաստանը: Այս հանգամանքը պայմանավորված է, ըստ էության, ԱՄՆ-ին Պլատֆորմի մասնակիցների թվից դուրս թողնելու Թուրքիայի պատրաստակամությամբ: Կարծում ենք, որ Ռուսաստանի դրական մոտեցումը ԿՀՊ-ի նկատմամբ կրում է միայն մարտավարական բնույթ, քանի որ դժվար է պատկերացնել, թե այդ պետության աշխարհառազմավարական հեռանկարը պարունակում է Հարավային Կովկասում մեկ այլ ակտիվ դերակատարի, բացի իրենից: Այս հանգամանքը հնարավորություն է տալիս բնութագրել ԿՀՊ-ի գաղափարը որպես դժվար իրականանալի:

Կարծում ենք, որ եւ Թուրքիան, եւ Ռուսաստանը, շատ լավ հասկանալով այդ հանգամանքը, այնուամենայնիվ, ակտիվորեն առաջ են տա-

նում ԿՀՊ-ի ստեղծման նախապատրաստական աշխատանքները՝ նպատակ ունենալով ծառայեցնել այդ գործընթացը իրենց մարտավարական շահերի իրականացմանը: Թուրքիան փորձում է մեկ անգամ եւս հավաստիացնել իր հարեւաններին եւ աշխարհին, որ վարում է ակտիվ ու բազմաբեւեռ աշխարհակարգային ընկալումների վրա հիմնված արտաքին քաղաքականություն, ինչպես դա վայել է աշխարհաքաղաքական առավելություններ ունեցող եւ Օսմանյան կայսրության հետնորդը հանդիսացող պետությանը: Միաժամանակ, ԿՀՊ-ի գործընթացը հնարավորություն է տալիս Թուրքիային «առավելություն» արձանագրել իր տարածաշրջանային ու պատմական մրցակից Իրանի հետ դարեր շարունակ մղվող պայքարում՝ թուլացնելով նրա դիրքերը Հարավային Կովկասում: Ռուսաստանի նպատակն է ամեն կերպ խոչընդոտել ԱՄՆ-ի ներթափանցմանը Հարավային Կովկաս:

Մեր պարագայում, կարծում ենք, ներգրավվածությունը ԿՀՊ-ի գործընթացի մեջ կբարձրացնի Հայաստանի աշխարհաքաղաքական «արժեքը» տարածաշրջանում: Համապատասխանաբար, աճում է նաեւ Թուրքիայի շահագրգռվածությունը՝ կարգավորելու հարաբերությունները Հայաստանի հետ, ինչը կհանգեցնի նրա կողմից իրականացվող «հարկադրման» քաղաքականության որոշ մեղմացմանը: Ինչպես հայտնի է, այդ «հարկադրման» քաղաքականության արտահայտումն են Հայաստանին ուղղված երեք նախապայմանները, որոնց կատարումով է Թուրքիան պայմանավորում դիվանագիտական հարաբերությունների հաստատումը եւ հայ-թուրքական սահմանի բացումը: Ի դեպ, Թուրքիայի նախագահի այցը Երեւան ստեղծեց բարենպաստ հնարավորություն՝ հարաբերությունները նորմալացնելու վերաբերյալ երկխոսություն ծավալելու ուղղությամբ:

«ՀԱՄՇԵՆՑԻՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱԳՈՒՄՆ ԻՆՁ ԱՎԵԼԻ ԻՐԱԿԱՆ Է ԹՎՈՒՄ»

Համշենահայ **Հիքմեթ Աքչիչեքի** հարցազրույցը
հատուկ «Հանրապետական» ամսագրի համար

Սույն թվականի հուլիսին Երեւանում, «Համշենական շաբաթվա» շրջանակներում, տեղի ունեցավ Թուրքիայի համշենական «Վոլա» երաժշտական խմբի համերգը: Խումբը ստեղծվել է Թուրքիայի մի խումբ համշենցիների ջանքերով: Սկսած 1996թ. նրանք հավաքում են համշենական ժողովրդական երգեր եւ մեղեդիներ, որոնք մեծ մասամբ անանուն են: Ինչպես նշում է խմբի ղեկավարներից **Հիքմեթ Աքչիչեքը`** մտահոգվելով, որ արագ փոփոխվող աշխարհում լուրջ վտանգ է սպառնում ինչպես Համշենի բարբառին, այնպես էլ այդ բարբառով երգերին, նրանք նպատակ են դրել հավաքել, մշակել եւ սերունդներին փոխանցել համշենական ժողովրդական ուրույն մեղեդիները եւ երգերը:

Եթե հաշվի առնենք Թուրքիայում էթնիկ խնդիրների հանդեպ զգայուն մոտեցումները, ապա այս խմբի այցը Հայաստան կարելի է համարել խիզախ քայլ: Երեւանում համշենահայերին նվիրված գիտաժողովից եւ համերգից հետո Հիքմեթ Աքչիչեքի հետ զրուցեցինք Թուրքիայի համշենահայերին վերաբերող մի քանի հարցերի շուրջ: Նշեն, որ Հիքմեթը երաժշտությամբ զբաղվում է առավելապես որպես հոբբի. նա ծագումով Հոփայից է, սակայն բնակվում եւ աշխատում է Ստամբուլում: Բացի այդ, նա անդամակցում է սոցիալիստական ուղղվածություն ունեցող Ազատություն եւ համերաշխություն կուսակցությանը, ծավալում է նաեւ քաղաքական գործունեություն: Հարցազրույցում նկատվող խուսափողական եւ դիվանագիտական պատասխանները, թերեւս, կարելի է կապել հենց վերը նշված հանգամանքի հետ:

Ռ. Ս.

Հարց. Հայտնի է, որ համշենցիների ծագման շուրջ տարբեր տեսակետներ կան. շատերը կարծում են, որ համշենցիներն ունեն հայկական ծագում, իսկ ոմանք նրանց վերագրում են թյուրքական ծագում: Կցանկանայի իմանալ Ձեր կարծիքն այս խնդրի շուրջ:

Պատ. Ես պատմաբան չեմ եւ պատմական փաստերի մասին տեղեկանում եմ տարբեր աղբյուրներ կարդալով: Սակայն տրամաբանորեն մտածելիս` համշենցիների հայկական ծագում ունենալու միտքն ինձ

ավելի իրական է թվում: Ես, իհարկե, առաջնորդվելով իմ ընդունած քաղաքական կողմնորոշումով, ազգային պատկանելությամբ չեմ հպարտանում կամ անաչում, եւ այս տեսանկյունից ինձ համար տարբերություն չկա՝ ծագումով հայ եմ, թուրք, թե արաբ: Նշեմ նաեւ, որ կան համշենցի երիտասարդներ՝ հատկապէս ձախ, սոցիալիստական գաղափարներ կրող, որոնք չեն խուսափում իրենց հայկական ծագում ունենալու փաստից, եւ նրանց մեջ նույնիսկ լինում են մարդիկ, որոնք ուրախանում են դրա համար: Կան ընդդիմադիր հայացքներ ունեցող համշենցի երիտասարդներ, որոնք հայկական ծագումը համարում կամ դիտում են որպէս ընդդիմադիր նկարագրի մի մաս: Սակայն ես այդպէս չեմ մտածում, այսինքն՝ համշենցի լինելն իմ ընդդիմադիր նկարագրի մի հատված չեմ համարում:

Չարգ. Այսինքն՝ համշենցի երիտասարդների մեջ կան մարդիկ, որոնք բացահայտ ասում են, որ հա՞յ են:

Պատ. Ես ավելի շատ ուզում եմ ասել, որ նրանք, ովքեր իմանում են, թե հայ են, դրանից անհանգստություն չեն զգում, քանի որ աշխարհին չեն նայում ազգային պատկանելության տեսանկյունից: Եվ բացի այդ, կան մարդիկ, երիտասարդներ, որոնք համշենցիների հայկական ծագում ունենալու դրույթը ճշմարիտ են համարում:

Չարգ. Ես որպէս թուրքագետ գիտեմ, որ ազգային փոքրամասնությունների հանդէպ թուրքիայում մշտապէս կիրառվել է հալածանքի քաղաքականություն, եւ իրական էթնիկ պատկանելությունը թաքցնելը կարող է կապված լինել այս հանգամանքի հետ:

Պատ. Ինչպէս շատ պետություններում, այնպէս էլ թուրքիայում չկա այնպիսի քաղաքականություն, որը կխրախուսի մարդկանց էթնիկ պատկանելության հետ կապված հետազոտությունների կատարումը, էթնիկ պատկանելության հիմքի վրա գործունեություն ծավալելը:

Չարգ. Ձեր ընտանիքներում տարեցները, ձեր ծնողները հայկական ծագման մասին ընդհանրապէս խոսո՞ւմ են:

Պատ. Այո, խոսում են, որովհետեւ Հոփայում համշենցիները, լազերը, Բորչկայի կողմերում՝ վրացիները միասին են ապրում, եւ մարդկանց, ժողովուրդների մեջ միմյանց հետ կապված, անցյալի հետ կապված որոշ հիշողություններ, կարծրատիպեր կան: Օրինակ, համշենցիների համար այդ տարածքներում շատ տարածված է «հաստակող հայ» արտահայ-

տուրքունը: Ես հիշում եմ, որ երեխա ժամանակ, երբ վիճում էինք, կռվում էինք մեր հարեւանների երեխաների հետ, նրանք մեզ, կարծես վիրավորանք, ասում էին «հայ, հայ» ու փախչում: Երեւի ծնողներից, ընտանիքներից լսել էին համշենցիների հայկական ծագում ունենալու վերաբերյալ խոսակցություններ: Եվ քանի որ հայերն ընկալվում էին թշնամի ազգի կատեգորիայում, համշենցի երեխան սա վիրավորանք համարելով՝ լալով գնում եւ ծնողներին հարցնում էր, թե մի՞թե իրենք հայ են: Ես ավելի ուշ, կարծեմ համալսարանական տարիներին (1980-ականների սկզբներին), երբ մեր հայկական ծագում ունենալու հավանականության մասին ավելի շատ ինֆորմացիայի սկսեցի տիրապետել, հորեղբորս հարցրի այդ մասին, նա էլ պատասխանեց. «Որդիս, ասում եմ, որ մեր նախնիները կրոնափոխ հայեր են եղել»:

Չարք. Ինչպես ավելի վաղ ես լսել էի հենց համշենցիներից, կրոնը ձեզ վրա շատ մեծ ազդեցություն չունի, այսինքն՝ իսլամի ոչ բոլոր սկզբունքներին եք հետեւում. որպես օրինակ նշվում է, որ օգտագործում եք սպիրտային խմիչքներ, մզկիթ շատ չեք հաճախում եւ այլն: Եվ ասում են, որ սա կարելի է նույնիսկ կապել համշենցիների մեծ մասի ձախակողմյա գաղափարներ ունենալու հետ:

Պատ. Ոչ, դա ձախակողմյա գաղափարների հետ կապ չունի: Իմ կարծիքով՝ մերոնք, շատ կրթված չլինելով հանդերձ, յուրացրել են խելամիտ իսլամի ուղին, եւ համշենցիների մեծ մասի համար կրոնը մոլեռանդության աստիճանի չէ: Օրինակ, ցերեկը համշենցին կարող է խմել, երեկոյան, սակայն, իր նամազն անել, կամ էլ առավոտյան նամազն արել է, իսկ երեկոյան կարող է խմել: Ռամադանի ամսում ծոմ է պահում, գնում աղոթքի, սակայն երկու օր հետո կարող է նստել եւ մի լավ խմել:

Չարք. Ինչպե՞ս եք գնահատում «համշեներենի» կամ ավելի ճիշտ՝ հայերենի Չամշենի բարբառի վիճակը:

Պատ. Չամշեներենը վերանալու գործընթացի մեջ է, եւ սա ավելի շատ կապված է ոչ թե Թուրքիայի քաղաքականության, այլ գլոբալացման, քաղաքաբնակների թվի աճի հետ: Չատկապես քաղաքաբնակ համշենցիների մեջ լեզվի կիրառումը գնալով թուլանում է: Երիտասարդ կանայք իրենց երեխաներին նախ եւ առաջ ոչ թե համշեներեն, այլ թուրքերեն են սովորեցնում, որպեսզի երեխաները հասարակության մեջ լեզվի տեսանկյունից խտրականության չենթարկվեն, խնդիր չունենան: Եվ երբ սովորում ես ընդհանուր պետական լեզուն, արդեն կարիք չի լինում տեղական լեզուն սովորել: Օրինակ, հիմա ես Ստամբուլում եմ ապրում,

կինս էլ համշենցի չէ, եւ շատ անհավանական է, որ իմ երկու աղջիկները համշեններեն սովորեն: Սա իրականում դժվար է եւ, բացի այդ, արդեն չկա այն բնական միջավայրը, որը կստիպի համշեններեն սովորել, իրական վտանգը հենց այստեղ է: Այսինքն՝ ուզում եմ ասել, որ պետության քաղաքականությունից առավել՝ նման հանգամանքներն են լուրջ դեր խաղում լեզվի կորստի հարցում: Բացի այդ, պետության այդ քաղաքականությունը նոր չէ, օսմանյան շրջանում էլ կար: Ուզում եմ ասել, որ ես այս տիպի քաղաքականությունը միայն թուրքիայի հետ չեմ կապում, բոլոր ազգային պետություններում էլ նման բաներ կան:

Չարգ. Տարբեր աղբյուրներից հայտնի է, որ, օրինակ, Թուրքիայի կրոնափոխ հայերի եւ նրանց սերունդների մեջ պահպանվել է ներքին ամուսնությունների սովորույթը: Այս սովորույթը համշենցիների շրջանում ներկայումս կա՞, թե՞ դա էլ է արդեն վերացել:

Պատ. Այսպես ասեմ, շատ անհավանական է, որ, օրինակ, Յոփայում ապրող մի համշենցի ամուսնանա ոչ համշենցու հետ: Այնտեղ հիմնականում համշենցին համշենցու հետ է ամուսնանում, լազը՝ լազի, վրացին՝ վրացու: Սակայն, ինչպես ասացի, քաղաքաբնակները եւ ընդհանրապես խոշոր քաղաքներում ապրողներն այլ միջավայր ունեն եւ այդ սովորույթը միշտ չէ, որ պահում են:

Չարգ. Քրիստոնեությունից մնացած սովորույթներ, ծեսեր դեռեւս կա՞ն Թուրքիայի համշենցիների շրջանում:

Պատ. Գիշտն ասած, ես չեմ կարող ասել, թե մեզ մոտ կիրառվող որ սովորույթը կամ տոնն ունի քրիստոնեական հիմք, բայց ասեմ, որ մենք՝ Յոփայի համշենցիներս, իսլամական մշակույթի համաձայն դաստիարակված եւ ըստ նրա ապրող մարդիկ ենք: Սակայն այսպիսի մի առանձնահատկություն կա. Յոփայի խմբի համշենցիները, լեզուն պահպանելով հանդերձ, հին ծեսերը, սովորույթները խստորեն չեն պահել, ինչը տարօրինակ մի բան է: Սակայն ի հակակշիռ Յոփայի խմբի՝ Ռիզեում, Չամլըհեմշինի կողմերում (*ուր լեզուն չեն պահպանել - Ռ. Մ.*) հատկապես ժողովրդական խաղերը, մի շարք ավանդական ծեսերը, օրինակ՝ Վարդավառը եւ այլն, լայնորեն կիրառվում են:

Չարգ. Վերջին տարիներին ե՛ւ համշենցիների, ե՛ւ Թուրքիայում բնակվող իսլամացված մարդկանց հանդեպ՝ լինեն հայ, հույն, ասորի, հետաքրքրությունն աճել է, եւ սրա հետ մեկտեղ սկսվել են քաղաքական շահարկումներ: Դուք սա ինչպե՞ս եք գնահատում:

Պատ. Անշուշտ, տարբեր պատմական դեպքերի, մարդկանց ապրած ողբերգությունների հայտնաբերումը շատ հետաքրքիր եւ ազդեցիկ կարող է լինել մարդկային տեսանկյունից: Օրինակ, Ֆեթիյե Չեթինի գրքի նման հարյուրավոր, հազարավոր պատմություններ կարող եք գտնել Անատոլիայում: Եվ պետք է հող նախապատրաստել, որպեսզի հնարավոր լինի սրանց մասին խոսել, դրա համար, ես կարծում եմ, ամենաանհրաժեշտ քայլը թուրքիայի դեմոկրատացումն է: Սակայն ճիշտ է նաեւ, որ թե՛ թուրքիայում, թե՛ մի այլ երկրում այս տիպի պատմությունները, դրանց ի հայտ գալն անհանգստացնում են նեղ ազգայնամուլական գաղափարներ կրողներին: Իմ կարծիքով, նման թեմաները հստակորեն քաղաքական շահարկումներից հեռու պետք է լինեն, դրանից ոչ մեկն օգուտ չունի:

Չարգ. Եթե որպես ելակետ վերցնենք մեր եւ համշենցիների մշակութային, լեզվական եւ այլ ընդհանրություններ, ապա ըստ Ձեզ՝ ինչպիսի՞ն պետք է լինի Հայաստանի հայերի եւ համշենահայերի հարաբերությունների ապագան:

Պատ. Մենք մի ընդհանուր տարածքում ենք ապրում, այսինքն՝ նույն աշխարհագրությունն ենք կիսում: Ես ձեզ հետ այնպես չեմ կարող վերաբերվել, ինչպես մի օտար մարդու հետ, ասենք՝ անգլիացու կամ գերմանացու: Մեր զգացումները, հայացքները միմյանց շատ մոտ են, նման են: Հայաստանցիների եւ համշենցիների հարաբերություններից ավելի շատ ես ցանկանում եմ, որ առողջ երկխոսություն, նորմալ հարեւանություն, բազմոլորտ հարաբերություններ լինեն Հայաստանի եւ թուրքիայի միջեւ:

*Զրույցը վարեց
Ռուբեն Մելքոնյանը*

ԱՂՐԲԵՋԱՆԸ ՆԱԽԱԳԱՅԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՇԵՄԻՆ Արաքս Փաշայան

Ա.թ. հոկտեմբերի 15-ին Աղբբեջանում անցկացվելու են նախագահական ընտրություններ: Ոչ մեկի համար այլևս գաղտնիք չէ, որ գրանցված բազմաթիվ թեկնածուներից հաղթելու իրական հնարավորություն ունի միայն գործող նախագահը, որի թեկնածությունն առաջ է քաշվել իշխող Ենի Ազըրբայջան (Նոր Աղբբեջան) կուսակցության, ինչպես նաև իշխանամետ մի քանի այլ կուսակցությունների ու հասարակական կազմակերպությունների կողմից:

Նախընտրական բուն գործընթացը սկսվել է օգոստոսի 1-ից՝ թեկնածուների գրանցմամբ, որն ավարտին հասավ սեպտեմբերի 5-ին, իսկ սեպտեմբերի 15-ը քարոզարշավի մեկնարկն է: Ընտրություններին մասնակցելու թույլտվություն ունենալու համար թեկնածուները պետք է հավաքեն շուրջ 40 հազար ստորագրություն, իսկ քարոզչության ժամանակահատվածը նախկին չորս ամիսների փոխարեն այժմ տեւելու է 2,5 ամիս:

Աղբբեջանի գրեթե բոլոր ընդդիմադիր կուսակցությունները բոյկոտել են ընտրությունները, իսկ ընտրություններին մասնակցող եւ ընդդիմադիր կեցվածք ունեցող թեկնածուներից ոչ մեկն ազդեցիկ կամ կշիռ ունեցող գործիչ չէ:

Ընտրությունները բոյկոտելու առաջարկով առաջինը հանդես եկավ Ազադըրգ (Ազատություն) դաշինքը, որն իր մեջ միավորում է ժողովրդական ճակատը, Լիբերալ կուսակցությունը, Քաղաքացիական եւ զարգացման կուսակցությունը: Ավելի ուշ, Մուսավաթը, Ժողովրդական կուսակցությունը, Բաց հասարակության կուսակցությունը, Դասական ժողովրդական ճակատը, Ազգային անկախության կուսակցությունը համարժեք կեցվածք ընդունեցին: Աղբբեջանի խորհրդարանի ընդդիմադիր պատգամավորների մեծ մասն իր համակրանքը հայտնեց բոյկոտին:

Դեռ հուլիսին Եվրոպայի խորհրդի արտաքին գործերի նախարարների կոմիտեի մոնիթորինգի հանձնախմբի (Ազոյի խումբ) պատվիրակության հետ հանդիպմանը Ազադըրգի ներկայացուցիչները հայտարարել էին, որ կբոյկոտեն Աղբբեջանում 2008 թվականին կայանալիք նախագահական ընտրությունները, եթե երկրում չստեղծվեն համապատասխան պայմաններ ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու համար, փոփոխություններ չմտցվեն ընտրական օրենքում:

Մուսավաթ կուսակցության առաջնորդ Իսա Ղանբարի համոզմամբ՝ մնացած ընդդիմադիր ուժերին այլընտրանք չի մնում, քան՝ միանալ մեծամասնությանը: Բոյկոտին միացան նաեւ մի շարք հայտնի քաղաքական գործիչներ, այդ թվում՝ Էլդար Նամազովը, ով ընդդիմության կողմից հավանական թեկնածու էր համարվում:

Նախագահական ընտրությունները բոյկոտած քաղաքական ուժերն իրենց որդեգրած նման դիրքորոշումը հիմնավորում են մի քանի փաստարկներով: Նրանք նշում են, որ ընտրական օրենքում կատարված փոփոխությունները, ասենք՝ քարոզարշավի ժամանակահատվածի կրճատումը, կամ՝ ընտրական հանձնաժողովներում ոչ թե հավասար, այլ իշխող կուսակցության 2/3-ի ներկայացվածությունը, հիմք են ստեղծում կեղծելու ընտրությունների արդյունքները, ուստի դրանց մասնակցելը միայն օրինական է դարձնում կեղծիքը: Ընդդիմության համոզմամբ՝ 120-ից 75 օր դարձած քարոզարշավի ժամանակահատվածը բավարար չէ, եթե ավելացնենք, որ հանրային հեռուստաալիքը նախագահի պաշտոնին հավակնող թեկնածուներին շատ սահմանափակ ժամանակ է տրամադրում, իսկ պետական հեռուստատեսությունն այլևս անվճար եթերաժամանակ չի տրամադրում:

Հատկանշական է, որ ընդդիմության նման կեցվածքը ադրբեջանական հասարակության մեջ լուջ դիսկուրսներ առաջ բերեց, ընդ որում՝ հակոտնյա: Ընդդիմության որոշմանը դեմ արտահայտվեցին հենց ընդդիմադիր կուսակցությունների շատ անդամներ, հասարակության առանձին շրջանակներ, քաղաքագետներ ու վերլուծաբաններ, որոնց կարծիքով՝ անկախ հաղթելու կամ չհաղթելու հնարավորությունից, ընտրությունները հարմար առիթ են՝ հակադարձելու ներկա վարչակարգին: Ըստ այդմ՝ ընդդիմադիրների մասնակցությունը կլինեք վարչակարգի դեմ ուղղված մարտահրավեր, ինչը կարող էր մրցակցության նախադրյալներ ստեղծել: Հնչած տեսակետներից մեկի համաձայն՝ ընդդիմադիրների նման կեցվածքը միայն ապացուցում է նրանց տկարությունն ու անկարողությունը:

Սակայն թե՛ տեղական, թե՛ օտար փորձագետների գնահատմամբ, վերջին տարիների ընթացքում վարկաբեկված ընդդիմության գործիչները գիտակցում են, որ եթե անգամ իրենց հաջողվեր միավորվել մեկ թեկնածուի շուրջ, Իլհամ Ալիևին իրական այլընտրանք հնարավոր չէր լինի ստեղծել:

Սեպտեմբերի 5-ին Ազադլըզ դաշինքի մեջ մտնող կուսակցությունները, նաև՝ ընդդիմադիր Մուսավաթը եւ Հանուն Ադրբեջանի հասարակական ֆորումը, համատեղ մի փաստաթուղթ ստորագրեցին, որում հոկտեմբերի 15-ին Ադրբեջանում անցկացվելիք թե՛ նախագահական ընտրությունները, թե՛ դրանից հետո ձեւավորվող իշխանությունները համարվեցին անօրինական: Սակայն նման փաստաթղթի առկայությունն ամենեւին էլ չի

փաստում, որ ընդդիմադիր դաշտում առկա քաղաքական ուժերի միջև լիարժեք փոխհամաձայնություն կա: Ժամանակ առ ժամանակ նրանք հանդես են գալիս իրար դեմ ուղղված քննադատությամբ: Որոշ դեպքերում միմյանց նկատմամբ անվստահությունը կապված է այս կամ այն ընդդիմադիր ուժի՝ իշխանության հետ համագործակցելու հնարավորության հետ:

Մինչդեռ Իլիամ Ալիևի վարկանիշը շարունակում է բավական բարձր մնալ: Այդ մասին են վկայում թե՛ տեղական, թե՛ արեւմտյան հարցախույզները, որոնց տվյալները փաստում են, որ Իլիամ Ալիևն ընտրություններին հաղթելու է բավական ծանրակշիռ առավելությամբ:

Հատկանշական է, որ այս տարի Ադրբեջանում ընտրական գործընթացին առնչվող նորարարություններ են արվել: Բյուջեով մեծ գումար է հատկացվել տեխնիկապես գերհագեցած առանձին ընտրատեղամասերի կառուցման համար: Նման լայնածավալ աշխատանք հետխորհրդային որեւէ հանրապետությունում չի իրականացվել:

Ադրբեջանում նախընտրական գործընթացն առաջն ընթանում է առանց ցնցումների: Այս առումով, թերեւս, բացառություն է օգոստոսի 17-ի երեկոյան աղոթքի ժամանակ Բաքվի Աբու Բաքր վահաբական մզկիթում տեղի ունեցած պայթյունը, որի արդյունքում զոհվեցին եւ վիրավորվեցին մի շարք նարդիկ: Վիրավորվեց նաեւ մզկիթի իմամը: Միջադեպն աննախադեպ էր եւ մեծ հնչեղություն ստացավ:

Ահաբեկչության կապակցությամբ հիմնականում մի քանի կարծիքներ հնչեցին: Պաշտոնական տեսակետի համաձայն՝ պայթյունը նպատակ ուներ նախագահական ընտրություններից առաջ ապակայունացնել սոցիալ-քաղաքական իրավիճակն Ադրբեջանում: Նույնիսկ տեսակետ հնչեց արտաքին ուժերի միջամտության մասին. նման կարծիք հայտնեց Ադրբեջանի իսլամական կուսակցությունը: Մեկ այլ վարկածի համաձայն՝ ահաբեկչությունը կարող էին կազմակերպած լինել արմատական իսլամի կողմնակիցները: Վերջիններս, թեւ իրենց չափազանց քիչ թվաքանակին, պայքարում են Ադրբեջանում իսլամական պետություն ստեղծելու համար: Խնդիրն այն է, որ իր համայնքում մեծ հեղինակություն վայելող Համեթ Սուլեյմանովը հայտնի է արմատական խմբավորումների դեմ իր բացասական կեցվածքով: Արդեն երկար ժամանակ է, ինչ նա սուլեյմի իսլամի տարբեր ուղղությունների ներկայացուցիչներին կոչ է անում համաձայնության գալ:

Չի բացառվում, որ իսլամի տարբեր ուղղությունների միջև ծայր առնող հակասությունները ոչ պակաս շահեկան են հենց պետության համար, որն օգտագործելով առիթը՝ ժամանակի ընթացքում արդեն օրենքի ուժով կարգելի նրանց գործունեությունը: Հայտնի է, որ իսլամի տարբեր ուղղությունների, այդ թվում՝ վահաբականների դեմ պարբերաբար իրականացվում են ճնշումներ ու ձերբակալություններ: Պետությունը

խատորեն վերահսկում է կրոնական կազմակերպությունների, կրոնա-քաղաքական տարբեր ուժերի գործունեությունը:

Չնայած մեկ անգամ չէ, որ իշխանությունները հայտարարել են, թե ձգտում են, որպեսզի Ադրբեջանում ձեւավորվի առողջ եւ կառուցողական ընդդիմություն, իրականում հազիվ թե դժգոհ լինեն, որ երկրում կենսունակ քաղաքական ուժեր չկան: Եվ այսօր Իլհամ Ալիեւը, որ տնօրինում է Ադրբեջանի նավթային տնտեսությունը, իր ղեկավարության օրոք արձանագրել է էական հաջողություններ երկրի ներքին եւ արտաքին քաղաքական կյանքում, ոչ մի լուրջ մրցակից չունի:

Այսպիսով, Չարավային Կովկասի մյուս հանրապետությունների համեմատությամբ, որտեղ նախընտրական եւ հետընտրական շրջանին բնորոշ էին սոցիալ-քաղաքական հուզումները, Ադրբեջանում ընտրական գործընթացն ընթանում է առանց լուրջ ցնցումների:

Ակնհայտ է, որ ընդդիմությունը վերջին տարիների ընթացքում հայտնվել է ճգնաժամի մեջ, ինչը համակարգային բնույթ ունի: Ընդդիմադիր գործիչներին չի հաջողվում միավորվել: Նրանց չի հաջողվում նաեւ դրսից ֆինանսական աջակցություն գտնել: Ադրբեջանում համոզված են, որ արտասահմանյան հիմնադրամները գումար չեն ներդնի անհեռանկար նախագծերում:

Ըստ էության, Ադրբեջանում չկան հասարակական լայն աջակցություն վայելող ընդդիմադիր ուժեր, որոնք կարող են ոտքի հանել հասարակությանը: Չատկանշական է, որ անգամ ընտրությունները բոյկոտած ընդդիմադիր քաղաքական ուժերը միասնաբար չեն գործում:

Ադրբեջանի վերաբերյալ քաղաքագիտական վերլուծություններում թեեւ հաճախ է նշվում, որ նախագահ Ալիեւի հաջողությունը պայմանավորված է երկրի սոցիալ-տնտեսական առաջընթացով եւ կենսամակարդակի աճով՝ ի հաշիվ նավթային եկամուտների, սակայն Ադրբեջանը կոռուպցիայի բարձր ցուցանիշ եւ սոցիալական բազմաթիվ խնդիրներ ունեցող երկիր է: Այնպես որ, վարչակարգի նկատմամբ իրականում կա որոշակի հասարակական դժգոհություն, ինչը, սակայն, չի հասունացել այն չափով եւ կամ էլ չի ուղղորդվում այն ձեւով, որպեսզի հնարավոր դարձնի իշխանափոխությունը:

Այնպես որ, առաջիկա ընտրությունները կլինեն, թերեւս, ամենական-խատեսելի Ադրբեջանի վերջին տարիների պատմության մեջ: Նախագահի պաշտոնում հինգ տարի ժամանակով կվերընտրվի Ադրբեջանի ներկա նախագահը: Ընտրությունները, թերեւս, կանխատեսելի կլինեին անգամ այն դեպքում, եթե ընդդիմությունն ունենար միասնական թեկնածու: Միանշանակ է, որ այդ դեպքում եւս պետական մեքենան բոլոր հնարավոր միջոցներով կաջակցեր Իլհամ Ալիեւին:

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՏԵՂԾՄԱՆ ԱԼԳՈՐԻԹՄԸ

Նոր պետությունների կազմավորման բարդությունները հաճախ կապված են հետեւյալ անհատականության հետ. ո՞րն է միջազգային իրավունքի երկու հիմնարար սկզբունքներից առավել կարեւորը՝ սահմանների անխախտելիությունը, թե՞ ազգերի ինքնորոշման իրավունքը: Սովորաբար, միջազգային ընկերակցությունն ավելի արժեւորում է առաջին սկզբունքը, քանզի երկյուղում է բազմազգ պետությունների փլուզման անկառավարելի շղթայական ռեակցիայից:

Պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքն առաջին անգամ սահմանվեց 1648թ.: Այն ժամանակ կնքվեց Վեստֆալյան հաշտության պայմանագիրը, ինչը վերջ դրեց եվրոպական աշխարհամասում մոլեզնող պատերազմների շարքին: Վեստֆալիայի բանակցությունները վերջ տվեցին բողոքականների եւ կաթոլիկների միջեւ երեսնամյա պատերազմին, ուր մի կողմից մարտնչում էին Շվեդիան, Բոհեմիան, Դանիան, Նիդեռլանդները, Շոտլանդիան, Անգլիան ու Սաքսոնիան, իսկ մյուս կողմից՝ Իսպանիան, Հռոմեական սրբազան կայսրությունը եւ այլք: Վեստֆալյան հաշտության պայմանագրի (որը վերածեւեց պետական սահմանները եվրոպայում) դրույթներից մեկը դարձավ այն սկզբունքը, որով անօրինական ճանաչվեց պետության ներքին գործերին արտաքին միջամտությունը, այսինքն՝ պետության տարածքային ամբողջականության սկզբունքը: Այժմ այն համընդհանուր ընդունված կանխադրույթ է եւ ներառված է բոլոր հիմնարար միջազգային համաձայնագրերում:

Սակայն, միաժամանակ, Վեստֆալյան հաշտությունը, փաստորեն, հաստատեց ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքը: Բանն այն է, որ մինչ Իսպանիայի դեմ հոլանդացիների ապստամբությունը, կասկածի չէր ենթարկվում միապետների՝ իրենց հպատակների ճակատագրերը վճռելու իրավունքը: Բայց Նիդեռլանդների դեպքում հպատակների դժգոհությունը հանգեցրեց նրան, որ միապետը կորցրեց այդ իրավունքը: Վեստֆալյան հաշտության պայմանագրի ստորագրման ժամանակ եվրոպական տերությունները փաստորեն ընդունեցին այն եւ համաձայնեցին ճանաչել անկախ Նիդեռլանդների սահմանները: Երկարաժամկետ հեռանկարում այդ որոշումը հանգեցրեց եվրոպական միապետությունների մեծ մասի

կործանման, բազմաթիվ անկախ պետությունների առաջացման եւ պետական սահմանների լուրջ վերածեւման:

Ամերիկյան պատմաբան, «Անկախության հռչակագիր. գլոբալ պատմություն» գրքի հեղինակ Դեւիդ Արմիթաջը պնդում է, թե միջազգային նշանակության հաջորդ փաստաթուղթը, որը հաստատեց ազգերի ինքնորոշման իրավունքը, դարձավ 1776թ. ընդունված ԱՄՆ անկախության հռչակագիրը: Հատկանշական է, որ Բրիտանական կայսրությունից անկախություն ստանալու 13 հյուսիսամերիկյան գաղութների փորձը շատ ժամանակակիցների կողմից խիստ բացասաբար ընդունվեց: Արմիթաջի կարծիքով, ԱՄՆ անկախության հռչակագիրն արմատապես փոխեց աշխարհը՝ այն «կայսրությունների աշխարհից» վերածելով «ինքնիշխան պետությունների աշխարհի»: Ամերիկյան հռչակագրի մոդելով ու նմանությամբ գրվեցին 100-ից ավելի պետությունների անկախության հռչակագրեր:

1945թ. ընդունվեց ՄԱԿ Կանոնադրությունը, որը խարսխվում է պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքի վրա. այդ սկզբունքն արգելում է միջազգային վեճերի լուծման համար ուժի օգտագործումը: Այսպես, Հոդված 2-ն (Կետ 4) ասում է, որ «ՄԱԿ բոլոր անդամներն իրենց միջազգային հարաբերություններում ձեռնպահ են մնում ուժի սպառնալիքից կամ նրա կիրառումից՝ ինչպես ցանկացած պետության տարածքային անձեռնմխելիության կամ քաղաքական անկախության դեմ, այնպես էլ Միավորված ազգերի նպատակների հետ անհամատեղելի որեւէ այլ ձեւով»:

1970թ. ՄԱԿ Գլխավոր վեհաժողովը հավանություն տվեց «Պետությունների միջեւ բարեկամական հարաբերություններին եւ համագործակցությանը վերաբերող միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագրին», որտեղ նշվում է, թե «պետությունների տարածքային ամբողջականությունն ու քաղաքական անկախությունն անձեռնմխելի են»: Նույն փաստաթղթում նաեւ նշված է, որ «ինքնիշխան եւ անկախ պետության ստեղծումը (...) կամ ժողովրդի կողմից ազատորեն որոշված ցանկացած այլ կարգավիճակի սահմանումը հանդիսանում են այդ ժողովրդի ինքնորոշման իրավունքի կենսագործման ձեւ» եւ որ «յուրաքանչյուր պետություն պարտավոր է ձեռնպահ մնալ որեւէ բռնի գործողությունից, որը կզրկի վերոհիշյալ ժողովուրդներին (...) ինքնորոշման, ազատության եւ անկախության իրավունքից»:

1960թ. ՄԱԿ Գլխավոր վեհաժողովն ընդունեց Գաղութային երկրներին ու ժողովուրդներին անկախություն տալու մասին հռչակագիրը: Այնտեղ եւս առկա են փոխադարձաբար բացառող դրույթներ: Այսպես, Կետ 1-ն ասում է, թե «ժողովուրդների ենթարկումը օտարերկրյա լծի եւ

տիրապետության (...) հանդիսանում է մարդու հիմնարար իրավունքների մերժում, ինչը հակասում է ՄԱԿ Կանոնադրությանը», իսկ Կետ 6-ը՝ որ «երկրի ազգային միասնությունը եւ տարածքային ամբողջականությունը մասնակիորեն կամ լիովին քայքայող յուրաքանչյուր փորձ անհամատեղելի է ՄԱԿ Կանոնադրության նպատակների ու սկզբունքների հետ»: Միեւնույն ժամանակ, Կետ 2-ը նշում է, որ «բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք, այդ իրավունքից ելնելով՝ նրանք ազատորեն որոշում են իրենց քաղաքական կարգավիճակը եւ իրականացնում սեփական տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացումը»:

1966թ. Տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների մասին միջազգային համաձայնագրի մեջ այս դրույթը («բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք, այդ իրավունքից ելնելով՝ նրանք ազատորեն որոշում են իրենց քաղաքական կարգավիճակը եւ իրականացնում սեփական տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացումը») ներառվեց ամբողջովին (Մաս 1, Գլուխ 1), իսկ պետությունների տարածքային ամբողջականության իրավունքի մասին այդ փաստաթղթում հիշատակված չէ:

1975թ. ստորագրվեց Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության գծով Յեւրոպայի խորհրդակցության եզրափակիչ ակտը: Այն նույնպես հաստատեց Երկրորդ աշխարհամարտից հետո Եվրոպայում ձեւավորված պետական սահմանների անխախտելիության սկզբունքը: Համաձայնագրի տեքստում, մասնավորապես, նշված է, որ «մասնակից պետությունները հարգելու են միմյանց ինքնիշխան հավասարությունն ու յուրօրինակությունը, ինչպես նաեւ իրենց անկախությանը հատուկ եւ նրա ընդգրկած բոլոր իրավունքները, որոնց թվում է, մասնավորապես, յուրաքանչյուր պետության իրավական հավասարության, տարածքային ամբողջականության, ազատության եւ քաղաքական անկախության իրավունքը» (Հոդված 2) եւ «մասնակից պետություններն անխախտելի են համարում ինչպես միմյանց, այնպես էլ Եվրոպայի բոլոր պետությունների սահմանները, ուստի եւ նրանք այժմ ու ապագայում էլ ձեռնպահ են մնալու այդ սահմանների նկատմամբ ցանկացած ոտնձգությունից» (Հոդված 3):

Միաժամանակ, այդ նույն փաստաթղթի Հոդված 8-ն ասում է. «Մասնակից պետությունները հարգելու են ժողովուրդների իրավահավասարությունը եւ իրենց ճակատագիրը տնօրինելու իրավունքը՝ մշտապես գործելով ՄԱԿ Կանոնադրության նպատակներին ու սկզբունքներին եւ միջազգային իրավունքի համապատասխան նորմերի համաձայն՝ ներառյալ նրանք, որոնք վերաբերում են պետությունների տարածքային ամբողջականությանը (...): Բոլոր ժողովուրդները միշտ իրավունք ունեն

լիակատար ազատության պայմաններում, երբ եւ ինչպես իրենք ցանկանում են, առանց արտաքին միջամտության, որոշել իրենց ներքին ու արտաքին քաղաքական կարգավիճակը եւ իրենց հայեցողությամբ իրականացնել սեփական քաղաքական, տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացումը»:

ՄԱԿ Կանոնադրության եւ ՅԵԼՍԻՆԿՅԱՆ ակտի փոխադարձաբար բացառող դրույթները բազմիցս հաստատվել են միջազգային այլ պայմանագրերի ու համաձայնագրերի շրջանակներում, այդ թվում նաեւ եվրոպական մակարդակով: Միջազգային իրավունքի ճանաչված մասնագետ, Քենեդիի ինստիտուտի համալսարանի աշխատակից Մարկ Վելերն այս պարադոքսն անվանում է «ինքնորոշման ծուղակ»:

«Ինքնորոշման դեպք» գրքի հեղինակ Կարեն Փարկերը նշում է, թե ժամանակակից միջազգային իրավունքը չի կարող միանշանակորեն պատասխանել «ի՞նչ է անհրաժեշտ անել նոր պետություն ստեղծելու համար» հարցին: 20-րդ դարում, գաղութային կայսրությունների փլուզման արդյունքում, երեւան եկավ այսպես կոչված «հռչակագրային» եղանակը, այսինքն՝ որեւէ տարածք պարզապես հայտարարում է այն մասին, թե ինքն իրենից ներկայացնում է անկախ պետություն: Ավանդական, այսպես կոչված «սահմանադրական» ճանապարհն առավել բարդ է: Այն հռչակում է, որ լիարժեք կարգավիճակի ձեռքբերման համար ինքնահռչակ պետություններին անհրաժեշտ է միջազգային ճանաչում: Դիվանագիտական ճանաչման ֆորմալ գործողությունը նշանակում է, որ մի պետությունը ճանաչում է մյուսի անկախ կարգավիճակը եւ նրա կառավարության լիազորությունները (միջազգային պրակտիկայում միշտ ճանաչվում է այս կամ այն երկրի կառավարությունը եւ ոչ թե բուն երկիրը):

Գոյություն ունի պաշտոնական ճանաչման երկու տեսակ՝ «դեֆակտո» եւ «դե-յուրե»: «Դե-ֆակտո» ճանաչումն (այսինքն՝ տվյալ կառույցի գոյության փաստի հիման վրա) ունի «ոչ պաշտոնական» բնույթ, սակայն դա բավարար է, որպեսզի երկու պետությունները կարողանան հաստատել դիվանագիտական հարաբերություններ, փոխադարձաբար ճանաչեն անձնագրերն ու մուտքի արտոնագրերը եւ այլն: «Դե-յուրե» ճանաչումը (այսինքն՝ գոյություն ունեցող միջազգային նորմերի հիման վրա) նախատեսում է ողջ ծավալով միջպետական հարաբերությունների հաստատում: Երբեմն «դե-ֆակտո» ճանաչումը նախորդում է «դե-յուրե» ճանաչմանը: Օրինակ, 1921թ. Մեծ Բրիտանիան բոլշեւիկների կառավարությանը «դե-ֆակտո» ճանաչեց որպես Ռուսաստանի օրինական իշխանություն, իսկ «դե-յուրե»՝ սոսկ երեք տարի անց:

Ճանաչումը նաեւ անհրաժեշտ է, եթե երկրում իշխանությունը փոխվում է ոչ սովորական ճանապարհով, օրինակ՝ հեղաշրջման, հեղափոխության կամ արտաքին ներխուժման արդյունքում: «Թալիբանի» կառավարությանը, որը 1996–2001թթ. «դե-ֆակտո» ղեկավարում էր Աֆղանստանի տարածքի մեծ մասը, ճանաչեց միայն աշխարհի երեք պետություն, մինչդեռ նրանց կողմից տապալված կառավարությանը, որը վերահսկում էր երկրի տարածքի 12 տոկոսից ոչ ավելին, օրինական ճանաչեց առավել քան 70 պետություն: 1940թ. հունիսին խորհրդային զորքերի կողմից գրավվեցին Լատվիան, Լիտվան ու Էստոնիան: Այդ երկրները կորցրին իրենց պետականությունը եւ ներառվեցին ԽՍՀՄ կազմի մեջ՝ միութենական հանրապետությունների կարգավիճակով: ԱՄՆ-ը չճանաչեց ԽՍՀՄ այդ գործողությունների օրինականությունը եւ Բալթիայի երկրները համարեց անկախ, բայց օկուպացված պետություններ: Այդ հանրապետությունների դեսպանատները, չնայած Մոսկվայի բողոքներին, շարունակեցին գործել Վաշինգտոնում:

Washington ProFile

29.08.2008

POST-KOSOVO. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՎՐՈՊԱ

Օլեգ Նեմենսկի

Կոսովոյի անկախության հռչակումը Կենտրոնական Եվրոպայում հանդիպեց ոչ միանշանակ արձագանքի: Որոշ երկրներ (Լեհաստան, Չեխիա, Լատվիա, Եստոնիա) բավական արագ ճանաչեցին նոր պետականությունը, մյուսներն (Սլովակիա, Ռումինիա) արդեն արտահայտել են իրենց միանգամայն որոշակի անհամաձայնությունն ինքնահռչակ անկախությանը: Կան նաև տատանվողներ, որոնք, թերևս, հակված են ճանաչմանը (Լիտվա, Չեխիա): Հասկանալի է, որ նման տարբեր վերաբերմունքը միայն ընդգծում է այս իրադարձության՝ որպես հնարավոր նախադեպի, ընդունումը: Այս երկրներից յուրաքանչյուրն ունի տարածքային իր խնդիրները, եւ ամեն մեկը կոսովյան անկախության հետեւանքները զգում է իր վրա:

* * *

Մերձբալթյան երկրների շարքում էթնիկապես առավել յուրօրինակ շրջանը ժենայտիան է **Լիտվայում** կամ, ինչպես այն ավանդաբար ռուսերեն անվանում են, ժմուդը:

Ժենայտիան պետության արեւմտյան մասն է, ունի չափազանց ընդգծված պատմական, լեզվական ու մշակութային առանձնահատկություններ: Այն լիտվական պետականության վաղ պատմությանը չի մասնակցել, քրիստոնեությունն այստեղ հայտնվել է 15-րդ դարում: Վիճելի է մնում այն հարցը, թե արդյոք ժմուդերենն առանձին բալթյան լեզու պետք է համարել: Պաշտոնական տարբերակով՝ այն ստորին լիտվական բարբառ է: Այն հակադրում են վերին լիտվականին՝ աուկշայթերենին, որի հիման վրա են ձեւավորվել լիտվական գրական կանոնները: Ինչեւէ, այն ունի սեփական գիրը եւ դեռեւս պատանի գրական ավանդույթը: Ժմուդերենով ռադիոհաղորդում է տրվում, հրատարակվում թերթ: 1997թ. նրան տրվել է տեղական կարգավիճակ, առկա է համապետական մակարդակով դրա պաշտոնական կարգավիճակի ճանաչմանն ուղղված շարժում:

Ժմուդական ինքնագիտակցության ձեւավորմանը զգալիորեն խանգարեց այն փաստը, որ 19-րդ դարում լիտվական ազգային վերածնունդը տեղի ունեցավ հիմնականում հենց ժմուդական հողում, ինչը նրա բնակչությանը խիստ մերձեցրեց բուն լիտվական (աուկշայթական)

ազգային նախագծին: Սակայն 20-րդ դարի առաջին կեսին, այնուամենայնիվ, ծնվեց ժնուդական գիրը, արվեցին գրական ստեղծագործության առաջին փորձերը:

Լիտվայից անջատվելու գաղափարը երբեմն արտահայտվում է արմատական ակտիվիստների շրջանում, բայց, ընդհանուր առմամբ, դեռևս վաղ է խոսել նկատելի անջատողականության մասին: Համեմայնդեպս, արդեն հետխորհրդային տարիներին ժնուդը դրսևորեց բավական ուժեղ տարածաշրջանային ինքնագիտակցություն եւ իր մշակույթն ու լեզուն առավել բարձր կարգավիճակի հասցնելու միտում:

Ի տարբերություն էթնիկապես խիստ միատարր ժնուդի, լիտվական պետության հարավը եւ, առաջին հերթին, Վիլենշչինան, բազմազգ է:

1897թ. մարդահամարի տվյալներով՝ Վիլնոյի լիտվացի բնակիչները կազմում էին բնակչության 2,1 տոկոսը, մինչդեռ ռուսները (բելառուսների հետ միասին) բնակչության գրեթե մեկ քառորդ մասն էին, ամենամեծ տոկոս էին կազմում հրեաները եւ լեհերը (համապատասխանաբար 40 եւ 30,9 տոկոս): Այսօր իրավիճակը փոքր-ինչ այլ է, սակայն, ընդհանուր առմամբ, քաղաքի բազմազգ դիմանկարը պահպանվել է: Լիտվացիները կազմում են բնակչության առավել քան կեսը, գրեթե յուրաքանչյուր հինգերորդը լեհ է, վեց-յոթերորդը՝ ռուս: Պատկերը նույնն է ողջ տարածաշրջանում:

Ընդ որում, պետք է նկատի ունենալ այն, որ լիտվացիներից բացի, առնվազն երկու այլ ժողովուրդ եւս՝ բելառուսները եւ լեհերը, հակված են Վիլենշչինան համարել իրենց պատմական հողը: Հետխորհրդային ժամանակաշրջանում, երբ Լիտվայի մշակութային միասնականացման քաղաքականությունը նկատելիորեն սաստկացավ, երեւան եկավ բազմազգության՝ որպես տարածաշրջանային պատմական յուրահատկության, արմատավորման գաղափարը:

Այն արտահայտվում է Վիլնյուսի մարզի եւ ողջ Հարավարեւելյան Լիտվայի (Ձուկիայի) քաղաքական կյանքում: Օրինակ՝ այստեղ գործում է Լեհական ժողովրդական կուսակցությունը, որը Եվրոպական ազատ դաշինքի անդամ է: Աստիճանաբար ակտիվանում են նաեւ ռուսական կազմակերպությունները: Սակայն Վիլնյուսի մայրաքաղաք լինելու կարգավիճակը հազիվ թե ապագայի շոշափելի հնարավորություն թողնի այդ գաղափարին: Արժե նաեւ նշել, որ «Ձուկիայի տարածաշրջան» պատմական հասկացության մեջ լիտվացիները փաստորեն ներառում են ամբողջ Սեւ Ռուսիան, այսինքն՝ Լեհաստանի Պոդլյաշի վոյեվոդության մի մասը եւ Բելառուսի ողջ Գրոդնոյի մարզը, ինչը անդրսահմանային համագործակցության գաղափարական հենքերից մեկն է:

Բազմէթնիկ տարածաշրջանային ինքնության ձեւավորման համար անհամեմատ մեծ հնարավորություններ են ստեղծվել հարեւան **Լատվիայում**:

Լատգալիան խիստ առանձնահատուկ տարածաշրջան է, որը զբաղեցնում է Լատվիայի տարածքի մոտ մեկ քառորդը եւ գտնվում է նրա արեւելյան մասում: Պատմական Լատգալիան հաճախ հայտնվել է այլ պետական կազմավորումների մեջ եւ այդ պատճառով պահպանել է կաթոլիկ հավատքի գերակայությունը՝ ի տարբերություն Լատվիայի մնացած՝ առավելապես լութերական տարածքի: Լատգալերեն լեզվի շուրջ ընթանում են վեճեր, ինչպես եւ ժնուդերենի պարագայում էր. այն լատիշերենի բարբա՞ռ է (վերին լատիշերեն), թե՞ ինքնուրույն բալթյան լեզու: Այնուամենայնիվ, լատգալերենը գրական լեզու դարձավ արդեն 18-րդ դարում, երբ նրանով արվեցին գրական ստեղծագործության առաջին փորձերը: Ներկայումս նրա կրողն է համարվում շուրջ 150 հազար մարդ, թեւ լատգալիական ինքնության կրողները, որոշ հաշվարկներով, շատ ավելին են՝ մոտ 400 հազար, այսինքն՝ Լատվիայի բնակչության գրեթե 20 տոկոսը:

1919թ. Պյոտր (Պետերիս) Ստուչկայի խորհրդային կառավարության կողմից լատգալերենը հռչակվեց որպես տարածաշրջանային պաշտոնական լեզու: 1934թ. Կառլիս Ուլմանիսն այն փաստորեն արգելեց, այնուհետեւ, 1940թ. լատգալերենը կրկին թույլատրվեց, բայց 1959–1989թթ. փաստացիորեն նորից հայտնվեց օրենքից դուրս վիճակում: Այժմ լատգալերեն լեզվի օգտագործման արգելքը հանվել է, սակայն «Լատգալ» ազգություն Լատվիայում նախկինի պես գոյություն չունի:

Իրադրությունը Լատգալիայում խիստ տարբերվում է ժնուդում տիրող իրավիճակից: Ինչպես Վիլենշչինայում, ժամանակակից Լատգալիայի կարեւոր յուրահատկությունը նրա բազմազգ բնակչությունն է: Այստեղ եւս զգալի տոկոս են կազմում ռուսները, ինչպես նաեւ լեհերը (հիմնականում՝ ռուսալեզու): Մեծ նշանակություն ունի ռուսական հասարակական ու քաղաքական կազմակերպությունների գործունեությունը, որոնք հանձն են առել պաշտպանել նաեւ մյուս ազգային փոքրամասնությունների իրավունքները: 2005թ. համալատվիական սեյմում ներկայացված ռուսալեզու փոքրամասնության «Միասնական Լատվիայում մարդու իրավունքների համար» կուսակցությունը փաստորեն կարողացավ իշխանության գալ Լատգալիայի երկու խոշորագույն քաղաքներում՝ Դվինսկում (Դաուգավպիլսում) եւ Ռեժիցայում (Ռեզեկենում):

Արդյունքում՝ ներկայումս ձեւավորվում է Լատգալիայի նոր իմիջը՝ որպես ազգային փոքրամասնությունների տարածաշրջան, որը պահան-

ջում է իր ճանաչումն ու սեփական իրավունքները: Լատգալական ավանդույթների հիման վրա ձեւավորվում է տարածաշրջանային բացառիկ ինքնությունը՝ բազմազգությունը նախանշելով որպես երկրամասի կարեւորագույն առանձնահատկություն, որը հակադրվում է պաշտոնապես անցկացվող լատիշացման ուղեգծին:

Այլ իրավիճակում հայտնվեց Հյուսիսարեւելյան **Էստոնիայի** ռուսալեզու բնակչությունը, որտեղ այն մեծամասնություն է կազմում: Սա հիմնականում վերաբերում է Իդա-Վիրումաայի մարզին, որն Էստոնիայի ամենամեծ երկրամասն է (երկրի տարածքի 7,4 տոկոսը): Ռուսները կազմում են նրա բնակչության 70,8 տոկոսը, Էստոնացիները՝ 20 տոկոսից էլ պակաս, թեւ 3իխվի կենտրոնական քաղաքում նրանց տոկոսը փոքրինչ բարձր է՝ 37 (գրեթե այնքան, որքան Տալլինի ռուսները): Մարզի ամենամեծ քաղաքում՝ Նարվայում (մեծությամբ երկրորդն Էստոնիայում), ռուսները կազմում են բնակչության 88 տոկոսը:

Նման կացությունը, հատկապես պաշտոնական իշխանության չափազանց կոշտ ազգային քաղաքականության պայմաններում, անխուսափելիորեն հանգեցնում է ռուսական ինքնավարության հռչակման, իսկ երբեմն էլ՝ նույնիսկ Էստոնիայից անջատման (հետագայում Ռուսաստանին միանալու համար) գաղափարների: Սակայն այդ գաղափարները, չնայած դրանց ժողովրդականության ալիքածեւ բնույթին, ոչ մի էական հաջողության դեռ չեն հասել: Իդա-Վիրումաայի իրավիճակը շատ բանով հիշեցնում է Կենտրոնական Եվրոպայի մի շարք այլ տարածաշրջանային խնդիրները, որտեղ ժամանակակից պետությունների սահմանները չեն համընկնում իրենց ժողովուրդների էթնիկ բնակեցման սահմաններին (դա հատկապես վերաբերում է հունգարական խնդրին, որին կանդրադառնանք ստորել):

Եվրոպայի մյուս պետությունների համեմատ **Լեհաստանը** էթնոտարածքային չափանիշներով բավական միատարր է: Դրան նպաստել են թե՛ լեհական իշխանությունների ավանդական կոշտ քաղաքականությունն էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ, թե՛ էթնիկ զտումները երկրորդ աշխարհամարտի ժամանակ, թե՛ ժողովուրդների վերաբնակեցման հետպատերազմյան գործընթացը: Այնուամենայնիվ, այստեղ եւս առկա են սեփական տարածաշրջանային շարժումներ եւ ինքնագիտակցության նկատելի յուրահատկություններ:

Էթնիկ եւ պատմական խիստ ակնառու առանձնահատկություն ունի Կաշուբշինան: Այն կաշուբների (արեւմտասլավոնական ժողովուրդ, որը ներկայացնում է վաղուց արդեն ոչնչացած պոմորյան սլավոնների մինչեւ մեր օրերը պահպանված մի հատվածը) անջատ բնակչության տարածք է:

Կաշուբների պատմական տարածքն ընդունված է համարել ողջ Պոմորիեն (Գդանսկից արեւմուտք՝ մինչեւ Շչեցին), սակայն ներկայումս նրանց բնակության տարածքը Պոմորիեի վոյեվոդության՝ Գդանսկից արեւմուտք եւ հարավ ընկած մի քանի գմինաներն են՝ Կարտուզա կենտրոնով: Ըստ 2002թ. մարդահամարի՝ իրեն կաշուբ է անվանում սոսկ 5100 մարդ, թեպետ նրանց թվաքանակի մասին ընդհանուր գնահատումներն այլ են՝ մոտ 300 հազար (որոշ կաշուբ գործիչների մեկնաբանմամբ՝ այդ թիվը պետք է գերազանցի կես միլիոնը): Կաշուբերեն լեզուն դեռեւս 15-16-րդ դարերից պահպանել է իր գրավոր հուշարձանները, թեւս արդի կաշուբական գրականությունը ստեղծվել է 19-րդ դարի երկրորդ կեսին:

Համեմատաբար վերջերս (Երկրորդ աշխարհամարտի ժամանակ եւ դրանից հետո) տեղի ունեցան լեհ-կաշուբական ընդհարումներ: Դրան նպաստեց այն, որ Բեռլինը հակված էր հանձնիս կաշուբների սլավոնացած գերմանացիների տեսնել, ուստի նրանց ավելի մեծ իրավունքներ եւ ազատություններ էր տվել, քան լեհերին:

Պատերազմից հետո նոր իշխանությունը մտադիր էր կաշուբներին գերմանացիների հետ միասին վտարել գերմանական հողեր, սակայն այդ քայլը կասեցվեց: Հետպատերազմյան քաղաքականությունն ուղղվեց կաշուբներին լեհերի հետ միաձուլելուն, ինչը բավական արդյունավետ եղավ: Ներկայումս կաշուբների մեծամասնությունը համատեղում է կաշուբական ու լեհական ինքնությունները: Երկրի երկու ամենահզոր կուսակցություններից մեկի՝ «Քաղաքացիական պլատֆորմի» առաջնորդ Դոնալդ Տուսկը կաշուբ է եւ քիչ բան չի արել իր ժողովրդի կրթության զարգացման ու մշակութային վերածննդի համար: Այնուամենայնիվ, նրա կաշուբական ծագումը չի խանգարում ոչ իրեն, ոչ էլ մյուս լեհերին՝ նրա մեջ տեսնելու լեհ հայրենասերի:

Այսօր կենցաղում կաշուբերեն խոսում է շուրջ 50 հազար մարդ: Գործում է կաշուբերեն լեզվի դասավանդմամբ մի քանի տասնյակ դպրոց, գոյություն ունեն կաշուբական ռադիո-հեռուստատալիքներ, թերթեր, հանդեսներ: Կաշուբական ազգային շարժումը, որը հիմնականում ներկայանում է «Կաշուբա-պոմորյան միությանը», հեռու է մնում անջատողականության մեղադրանքներից, առավել եւս, որ գլխավոր խնդիրն այժմ Լեհաստանի կողմից առանձին կաշուբ ազգության ճանաչումն է: Կաշուբները պաշտոնապես ընդունվում են որպես լեհ ժողովրդի էթնիկ խումբ, իսկ կաշուբերենը՝ բարբառ: Նախկին գերմանացումը փոխարինվել է լեհացմամբ:

Լեհաստանի մյուս խոշոր տարածաշրջանը, որն ունի սեփական էթնիկ ու պատմական ընդգծված առանձնահատկություն, Սիլեզիան է: Ընդ

որում, այս տարածաշրջանն անդրազգային է. այն հիմնականում ընդգրկում է Լեհաստանի Ստորին Սիլեզիայի, Սիլեզիայի եւ Օպոլեի վոյեվոդությունները, ինչպես նաեւ Չեխիայի Սիլեզա-մորավական մարզի հյուսիսը:

Լեհաստանում ու Չեխիայում սիլեզցիները ճանաչվել են էթնիկ փոքրամասնություն, բայց չունեն ազգային փոքրամասնության կարգավիճակ, փոխարենը՝ այդպիսին ճանաչվել են Սլովակիայում: 2002թ. լեհական մարդահամարի համաձայն՝ իրեն սիլեզցի է համարում 173 հազարից ավելի մարդ: 2001թ. Չեխիայում այդպիսիներն ընդամենը 10 հազ. 878-ն էին, թեև 1991թ. նրանք անհամեմատ ավելին էին՝ 44,5 հազար: Սեփական գրական ավանդույթներ սիլեզերենը չունի, թեպետ դեռ 19-րդ դարի սլավոնագետների կողմից ընդունվել է որպես առանձին լեզու:

1930-ական թվականներին գրականագետների խմբի կողմից (Օ.Լիսոգորսկու գլխավորությամբ) Սիլեզիայի համար մշակվեց այսպես կոչված լայնություն լեզուն, որով այն ժամանակ ու հետպատերազմյան տարիներին գրվեցին մի քանի չափածո եւ արձակ ստեղծագործություններ: Լայնությունը մոտ է չեխերենին, ուստի շատ բանասերների կողմից դիտվում է որպես երեւոյթ չեխերեն լեզվի ներսում: Այնուամենայնիվ, այն այդպես էլ տարածում չստացավ:

Սիլեզերենի օրինականացման այս եւ մյուս փորձերը որոշակի հաջողություններ բերեցին արդեն մեր օրերում. սիլեզերեն լեզուն գրանցվեց Ստանդարտացման միջազգային կազմակերպությունում: 2007թ. ամռանը ԱՄՆ Կոնգրեսի գրադարանը սիլեզերենը ներառեց աշխարհի լեզուների գրանցամատյանում: 2007թ. սեպտեմբերին Սեյմի 23 պատգամավորներ սիլեզերենին տարածաշրջանային կարգավիճակ շնորհելու մասին օրինագիծ մտցրին: Բայց պաշտոնական Վարչական նախկինի պես սիլեզցիներին առանձին ժողովուրդ չի ճանաչում, իսկ լեզուն համարում է լեհերենի բարբառ կամ անցողիկ բարբառ լեհերենի ու չեխերենի միջեւ:

Վերջին ժամանակներս սիլեզյան շարժումը հիմնականում գործում է Լեհաստանում, ուր նկատվում է նրա ակնհայտ աշխուժացում: Սիլեզերեն լեզվի կրողների թիվն այստեղ գնահատվում է մոտ 60-70 հազար մարդ: 2003թ. պատմաբան Դարիուշ Երչինսկու կողմից լույս ընծայվեց «Սիլեզցի ժողովրդի պատմությունը», որը սիլեզյան ազգային պատմության սինթեզի փորձ է: 1990թ. ստեղծվեց Սիլեզիայի ինքնավարության շարժումը: Նրա առաջնորդ Եժի Գոժեիկը բավական արմատական դիրքորոշում ունի («Ես սիլեզցի եմ, այլ ոչ թե լեհ»): Սակայն շարժման քաղաքական ծրագիրը բավական չափավոր է. այն պայքարում է Վարչակալի կողմից սիլեզցի

ազգության ճանաչման ու երկու տարածաշրջանների՝ Վերին և Ստորին Սիլեզիաների ինքնավարության կարգավիճակի համար:

Այնուամենայնիվ, Սիլեզիայի բնակչության մեջ սիլեզիների իրական բաժնեմասը բավական փոքր է, և դա անդրադառնում է նաև սիլեզի ինքնավարականների քաղաքական պահանջների վրա:

Սիլեզիայի բնակչության զգալի մասն ավանդաբար կազմել են գերմանացիները: Երկրորդ աշխարհամարտից հետո գերմանացիների մեծ մասն արտաքսվեց: Այսօր Վերին Սիլեզիայում ապրում է Լեհաստանի ողջ գերմանացիների 92 տոկոսը՝ գրեթե 140 հազար մարդ. այն ամենամեծ ազգային փոքրամասնությունն է երկրում: Օպոլեի վոյեվոդությունում նրանք շուրջ 10 տոկոս են, և նույնիսկ կան գերմանացի գերակշիռ բնակչությամբ գմինաներ: Բացի դրանից, Սիլեզիայի բնակչության կազմի վրա մեծ ազդեցություն է գործել հետպատերազմյան վերաբնակեցման քաղաքականությունը. այստեղ Արևմտյան Ուկրաինայից վերաբնակեցվեցին մեծ թվով լեհեր: Այդ մարդիկ ունեն համալեհական ինքնագիտակցություն և հակված չեն սովորելու յուրօրինակ սիլեզերեն լեզուն: Սակայն սիլեզյան վոյեվոդություններում, ընդհանուր առմամբ, ապրում է Լեհաստանի բոլոր քաղաքացիների 67,8 տոկոսը, որոնց հատուկ է ոչ լեհական ինքնագիտակցությունը:

Գերմանիայում, Սիլեզիայի հարեւանությամբ, գտնվում է Լուժիցայի պատմական մարզը, որն օժտված է մեծ էթնոմշակութային առանձնահատկությամբ: Լուժիցիները (լուժիցցի սերբերը) Գերմանիայի՝ պաշտոնապես ճանաչված չորս ազգային փոքրամասնություններից են (գնչուների, ֆրիզների և դանիացիների հետ միասին): Նրանք շուրջ 60 հազար են, որոնցից 20 հազարն ապրում է Ստորին Լուժիցայում (Բրանդենբուրգի երկրամաս), իսկ 40 հազարը՝ Վերին Լուժիցայում (Սաքսոնիայի երկրամաս): Լուժիցիներն արեւմտասլավոնական ժողովուրդների գրեթե անհետացած ճյուղի՝ պոլաբների չորրորդ սերնդի ներկայացուցիչներն են և ունեն լեզվի ու մշակույթի բավական նկատելի յուրահատկություն: Ինչպես պոմորցի կաշուբների պարագայում, լուժիցցիների պատմության մեծ մասը կազմում է նրանց գերմանացման աստիճանական գործընթացը: Սերբալուժիցական գրերը ստեղծվել են դեռևս 16-րդ դարում, իսկ 18-րդ դարի երկրորդ կեսից մինչև 19-րդ դարի առաջին կեսը ձեւավորվել է նաև սեփական գրական ավանդույթը: Օրինակարգված են լուժիցերեն լեզվի երկու տարբերակները, բայց այժմ ստորին լուժիցերենն արդեն մոտ է անհետանալուն, մինչդեռ վերին լուժիցերենը դեռ պահպանում է իր նշանակությունը (այնուամենայնիվ, լուժիցցի գործիչները կարծում են, որ երկու-երեք սերունդ անց այն եւս կարող է անհետանալ):

Վերին եւ Ստորին Լուծիցաներն ունեն նկատելի մշակութային առանձնահատկություն. օրինակ՝ Վերին Լուծիցայուն գերակշռում է կաթոլիկությունը, իսկ Ստորինում՝ բողոքականությունը: Թեեւ 20-րդ դարի սկզբին լուծիցցիների թիվը 150 հազարից ավելին էր, Առաջին աշխարհամարտից հետո իրենց ինքնավարական իրավունքներ տրամադրելու նրանց պահանջները հաշվի չառնվեցին: Երրորդ Ռեյխի տարիներին լուծիցցիները ենթարկվեցին ցեղասպանության (20 հազարից ավելի սպանվածներ՝ գումարած մեծ թվով արտաքսվածներ): Արդեն պատերազմից հետո ակտիվորեն առաջադրվեց Սերբալուծիցական պետության ստեղծման գաղափարը (ինքնուրույն կամ Չեխոսլովակիայի կազմում), սակայն դա էլ չկենսագործվեց: 1989–1990թթ., Գերմանիայի միավորման շրջանում, լուծիցցի գործիչները ձգտում էին ինքնավարության, բայց այս անգամ էլ նրանց պահանջները չբավարարվեցին: Այժմ լուծիցցիները շատ արագ ուժացվող ժողովուրդ են հանդիսանում: Լուծիցական դպրոցներն իրենց տեղն էլ ավելի են զիջում գերմանականին, իսկ լեզուն գործածությունից դուրս է գալիս:

Վերադառնալով Լեհաստան՝ կարելի է ասել, որ մի ամբողջ շարք մարզեր եւս ունեն իրենց պատմական եւ էթնիկական յուրահատկությունները, որոնք շատ անգամ նշանակալի դեր են խաղացել սահմաններն անցկացնելիս, սակայն 20-րդ դարում դրանց լեհացման եռանդուն քաղաքականությունից հետո նրանք հազիվ թե կարողանան իրենց մասին լրջորեն հայտարարել: Առաջին հերթին, դա վերաբերում է պետության արեւելյան մարզերին:

Դեռ 100 տարի առաջ լեհական ինքնագիտակցությունն ամրապնդված չէր մագուրների՝ Մագուրիայի բնակիչների շրջանում, որը նախկինում Արեւելյան Պոլսիայի մասն էր: Նրանք ունեն բավական հզոր բարբառային առանձնահատկություններ, սակայն ժամանակակից լեհ ազգի մեջ նրանց դերակատարությունն արդեն բավական որոշակի է: Այլ են գործերը Պոդլյաշիեում (Պոդլյաշիեի վոյեվոդության մաս), Խոլմշչինայում (Լյուբլինի վոյեվոդության մաս) եւ Նադսյանիեում (Մերձկարպատյան վոյեվոդության մաս)՝ պատմական արեւելասլավոնական հողերում, որտեղ դեռ 20-րդ դարի սկզբին գերակշռում էր ուղղափառ բնակչությունը: Մինչ օրս բելառուսները եւ ուկրաինացիները դրանք համարում են իրենց էթնիկ տարածքները: 20-րդ դարում երկու անգամ (Առաջին աշխարհամարտից առաջ ու Երկրորդից հետո) դրանք ընդգրկվեցին ռուսական (կամ ուկրաինական եւ բելառուսական) վարչական կազմավորումների մեջ, բայց արդյունքում, այնուամենայնիվ, մնացին Լեհաստանից: 1940-ական թվականների երկրորդ կեսին 100 հազա-

րավոր արեւելյան սլավոնների վերաբնակեցման (Ուկրաինա, Բելառուս ու Լեհաստանի արեւմտյան հողեր՝ ըստ «Վիսլա» գործողության) արդյունքում այդ տարածքների բնակիչների էթնիկ կազմն արմատապես փոխվեց:

Չնայած բնակչության լեհացված լինելուն, մինչ օրս տարածաշրջանում զգալի դեր է խաղում ուղղափառ եւ, ընդհանրապես, արեւելասլավոնական ավանդույթը: Բելուստոկը Լեհական ինքնուրույն ուղղափառ եկեղեցու (որը, պաշտոնական տվյալներով, ունի 600 հազարից ավելի հետեւորդ) կենտրոնն է: Գործում են բելառուսական եւ ուկրաինական ուղղվածության մի շարք կազմակերպություններ, սակայն նրանց ուշադրությունը կենտրոնացած է մշակութա-լուսավորչական գործունեության վրա: Ուղղափառ եկեղեցու պահպանված ենթակառուցվածքն ու հարեւան Բելառուսի եւ Ուկրաինայի հետ տարածաշրջանների համագործակցության ակտիվությունն օգնում են մասնակիորեն պահպանել նրանց պատմական նկարագիրը, իսկ վերջին տարիներին դիտվում է տեղի մշակութային վերածննդի ակնհայտ գործընթաց՝ հատկապես եկեղեցակրոնական հենքով:

Նկատելի գործունեություն է ծավալվել Լեհաստանի մյուս արեւելասլավոնական հողերում՝ Լեմկովշչինայում (սահմանամերձ տարածք Մերձկարպատյան եւ Փոքրկարպատյան վոյեվոդություններում): Այստեղ արեւելասլավոնական բնակչությունն, արտաքսման երկու ալիքից հետո, նույնպես մնացուկային բնույթ է կրում եւ, այնուամենայնիվ, կարողացել է մինչ օրս պահպանել իր ինքնությունը: Ըստ 2002թ. մարդահամարի՝ տեղի ռուսիները՝ լեմկերը, հաշվվում են 6000 մարդ, բայց լեմկական կազմակերպությունների սեփական հաշվարկները խոսում են 60 հազարի մասին: Վերջերս օրինակարժեց նաեւ ռուսիներեն լեզվի (ճանաչվել է 2000թ.) լեմկերեն կանոնը, թեւ տեղի բարբառով գրականությունը (այդ թվում նաեւ թերթերի ու հանդեսների հրատարակությունը) զոյություն է ունեցել դեռեւս 19-րդ դարի վերջից: Չնայած հետպատերազմյան քաղաքականությանը, որը լեմկերին ընդունում է որպես ուկրաինացիներ, նրանք չենթարկվեցին լրիվ ուկրաինացման: Ներկայումս նրանց շրջանում գերիշխող հոսանքը ռուսիական ազգային նախագծի (Ուկրաինայի Անդրկարպատյան մարզի եւ Սլովակիայի Պոյաշեյան Ռուսիայի հետ միասին վերցրած) կողմնակից է, թեպետ նախկինի պես ոչ քիչ դեր է խաղում ուկրաինասիրական հոսանքը: Լեմկերը լույս են ընծայում սեփական հանդեսներ, տարվում է մշակութային եւ կրթական ակտիվ գործունեություն:

Հարեւան **Սլովակիայում**՝ Պոյաշեյչինայում, ռուսիական շարժումը եւս խիստ նկատելի է: 1989թ. հետո կրկին սկսեցին հրատարակվել ռուսիալեզու հանդեսներ ու թերթեր, բառարաններ ու ձեռնարկներ:

Պրյաշեյ քաղաքը դարձավ ռուսինական ազգային շարժման հիմնական կենտրոններից մեկը: 1990-ական թվականներին ռուսիների թիվն ավելացավ ավելի քան 40 տոկոսով (ըստ 1991 եւ 2001թթ. մարդահամարների՝ նրանք շուրջ 25 հազար են), իսկ նրանց իրական թիվը Սլովակիայում կազմում է մոտ 130 հազար: 1999թ. բացվեց Պրյաշեյի համալսարանի Ազգային փոքրամասնությունների եւ օտար լեզուների ինստիտուտի ռուսիներեն լեզվի ու ռուսինական մշակույթի բաժանմունքը: Ռուսիներենով անցկացվում է նաեւ ռադիոհաղորդում: Ընդ որում, տեղի ռուսինական կազմակերպություններն ունեն ավելի չափավոր դիրքորոշում, քան ուկրաինական Անդրկարպատների ռուսիները եւ հանդես չեն գալիս սեփական ինքնավարության ստեղծման կոչերով: Սլովակիայում ռուսինական ազգային նախագծի ընդհանրությունն Անդրկարպատների ու Լեմկովշչինայի հետ, ուկրաինացման/սլովակացման/լեհացման գործընթացներին դիմակայելու ընդհանուր խնդիրը եւ վերջին երկու տասնամյակներին այդ շարժման նկատելի աշխուժացումը՝ այս բոլորը ռուսինությունը դարձնում են բավական նշանակալի գործոն:

Չարեւան **Չեխիայում** կարելու տեղ է զբաղեցնում Մորավիայի էթնոքաղաքական շարժումը: Մինչեւ 19-րդ դարի սկիզբը կարելի էր խոսել մորավների ազգային ինքնագիտակցության ձեւավորման գործընթացի մասին, սակայն, ավելի ուշ, տեղական շարժումը դարձավ չեխական ազգային վերածննդի մաս: Առանձին մորավերեն լեզու ստեղծելու փորձեր ձեռնարկվեցին 1820–1830թթ. (քերականության հրատարակում), բայց դրանք լուրջ շարունակություն չունեցան: Այնուամենայնիվ, Մորավիայի մշակութային յուրօրինակությունը պահպանվեց: 1945թ. Մորավիային տրվեց ինքնավարություն, որը շուտով լուծարվեց (1949թ.): 1968թ. մորավական Բռնո գլխավոր քաղաքում ստեղծվեց «Մորավիայի եւ Սիլեզիայի ընկերակցությունը», որը պայքարում էր տարածաշրջանի ինքնավարության կարգավիճակի վերականգնման համար: 1989թ. հիմնվեց «Մորավական քաղաքացիական շարժումը», որը պահանջում էր «մորավ ժողովրդի գոյության ճանաչում՝ չեխերին ու սլովակներին իրավահավասար»:

1990-ական թվականները մորավական ինքնության վերածննդի ակտիվ ժամանակներ էին: 1991թ. մարդահամարը Չեխոսլովակիայում արձանագրեց 1 մլն 360 հազար մորավ: 1990թ. վերջին կազմավորվեց «Մորավական ազգային կուսակցությունը»: 1990-ականների վերջին եւ 2000-ականների սկզբին մորավական ազգայնականության ժողովրդականությունը սկսեց մարել, եւ, այնուամենայնիվ, այն մնում է որպես տարածաշրջանային ինքնագիտակցության դրսեւորման կարելու ձեւ:

Մեր ժամանակներում Մորավիայի ինքնավարության համար պայքարում են մի ամբողջ շարք քաղաքական կազմակերպություններ՝ «Մորավիայի ազգային կուսակցությունը», «Մորավիայի եւ Սիլեզիայի միությունը», «Մորավիայի դեմոկրատական կուսակցությունը» եւ այլն: Եվրոպական միության նոր պայմաններում մորավական թեման կրկին արթնանում է:

Կենտրոնական Եվրոպայի տարածաշրջանի համար շատ կարեւոր է նաեւ վերաբնակիչների խնդիրը: Երկրորդ աշխարհամարտից հետո նոր հողերում վերաբնակեցված մարդկանց վիթխարի զանգվածները պահպանում են կորուսյալ հայրենիքի հիշողությունը եւ ստեղծում են բազմաթիվ «վտարանդիների միություններ», որոնք պայքարում են վերաբնակեցման քաղաքականության դատապարտման ու իրենց վերադարձի իրավունքի ճանաչման համար: Այդ կազմակերպությունները պահպանում են արդեն գոյություն չունեցող տարածաշրջանների՝ լեհական «արեւելյան կրեսների», Պրուսիայի, Սուդեթների եւ մյուսների ինքնությունը:

Սակայն չի կարելի ժխտել, թե նշված միություններն, այնուամենայնիվ, կհասնեն իրենց նպատակին. վերջին մեկուկես տասնամյակի բոլոր իրադարձությունները հանգեցնում են անցած պատերազմի արդյունքների վերանայման իրագործելիության մտքին: Այդ մասին է վկայում նաեւ կոսովյան նախադեպը. չէ՞ որ Կոսովոյի անկախությունը Մեծ Ալբանիայի վերածննդի մի աստիճանն է, որը գոյություն է ունեցել ֆաշիստական Իտալիայի ու նացիստական Գերմանիայի պրոտեկտորատի ներքո: Վտարանդիներին նախկին հողեր վերադառնալու իրական թույլտվության դեպքում ներկայիս բավական միատարր մարզերի էթնիկ կազմում կարող են տեղի ունենալ նկատելի փոփոխություններ. ընդ որում, դա վերաբերելու է հենց բնակչության ամենաակտիվ շերտերին: Խոսքն, առաջին հերթին, նախկին տարածքներ գերմանացի, լեհ եւ ուկրաինացի բնակչության մեծ խմբերի վերադարձի մասին է: Հայրենադարձներն, անշուշտ, իրենց հետ կբերեն նաեւ հին տարածաշրջանային գաղափարախոսությունները, որոնք նորովի կլուսաբանեն այդ տարածաշրջանների ապագան: Սակայն այս գործընթացներին դեռեւս մեկնարկ չի տրվել, ուստի այդ ինքնություններն ու դրանց վրա հիմնված անջատողականությունն այստեղ հատուկ չեն դիտարկվի:

Այս գործընթացը, թերեւս, ունի եւս մեկ կողմ, որն արդեն սկսել է կյանքի կոչվել. դա բնակչության այն հատվածի վերադարձն է նախկին ինքնությանը, որը պատերազմից հետո այլ ինքնություն է ձեռք բերել: Օրինակ, Լեհաստանի կողմից 2008թ. գարնանը արտերկրի լեհերին հատուկ արտոնություններ տրամադրելու վերաբերյալ հրապարակված ծրագիրը, որոշ հաշվարկներով, կարող է լրջորեն փոխել Արեւմտյան

Ուկրաինայի էթնիկ իրավիճակը, ուր լեհական ինքնությանը վերադառնալ է ցանկանում շուրջ 1,5 միլիոն մարդ: Այդ նույն հիմունքով են ընթանում հունգարական ազգային փոքրամասնությունների աճի գործընթացները: Եվ այնուամենայնիվ, արժե նշել, որ նման «ինտելեկտուալ հայրենադարձությունից» մինչև իրապես արժեքավոր տարածաշրջանային ինքնությունների ձեւավորումն ու դրանց վրա հենվող շարժումները՝ մի քայլ չեն: Թե որքան հեռու կարող են գնալ գործընթացները՝ ապագայի հարց է:

Ներկայումս առավել կարելի է այն տարածաշրջանները, որոնք երկրորդ աշխարհամարտից հետո ընդգրկվել են նոր ազգային պետությունների մեջ, բայց որոնցից չի տարհանվել տեղի այլազգի բնակչությունը: Խոսքն, առաջին հերթին, հունգարների մասին է, որոնք այսօր Յուգոսլավիայի հարեւան մի շարք երկրներում խիստ զգալի ազգային փոքրամասնություն են կազմում: Սլովակիայում հունգար փոքրամասնությունը կազմում է բնակչության գրեթե 10 տոկոսը եւ հարավում՝ Յուգոսլավիայի հետ սահմանի երկայնքով զբաղեցնում է լայն գոտի: «Յուգոսլավիայի կոալիցիայի կուսակցությունը», որը ներկայացնում է սլովակ հունգարներին, Սլովակիայի քաղաքական կյանքում չափազանց ակնառու դեր է խաղում, սակայն սլովակյան պետականության նկատմամբ լոյալ դիրքորոշում ունի: Նույնը չի կարելի ասել մի շարք հունգարական հասարակական կազմակերպությունների եւ առանձին գործիչների մասին, որոնք մշտապես բարձրացնում են հունգարական ինքնավարության եւ անգամ Յուգոսլավիայի կազմ վերադառնալու հարցը: Առավել փոքր նշանակություն ունի Ուկրաինայի Անդրկարպատյան մարզի հունգար ազգային փոքրամասնությունը: Սակայն այստեղ էլ նա չափազանց ակտիվ է: Երկրամասի կյանքում մեծ դեր են խաղում Վոյեվոդինայի հունգարները (14 տոկոս), որոնք մեծ չափով վերահսկում են նրա տնտեսությունը:

Առավել նշանակալի է հունգարական ակտիվությունը ռումինական Տրանսիլվանիայում, ուր այն ուղղված է ինքնավարական իրավունքների ճանաչմանը, նաեւ ողջ տարածաշրջանի համար պաշտոնական հունգարերենի ընդունմանը: Յուգոսլավիայի ինքնավար օկրուգ Տրանսիլվանիայի մի մասում 1952 – 1967թթ. արդեն գոյություն ունեցել է: Այժմ հունգարների թիվը **Ռումինիայում** կազմում է շուրջ 1,5 մլն մարդ, ընդ որում, այդ թիվն աճելու միտում ունի: 2007թ. մարտի վերջին տրանսիլվանյան երեք շրջաններում անցկացվեցին հանրաքվեներ, որտեղ բնակչությունն արտահայտվեց Բուխարեստից առավելագույն ինքնավարության եւ Յուգոսլավիայի հետ առանձնակի հարաբերությունների օգտին: Յուգոսլավիայի նախագահ Լասլո Շոյոնը դրանից հետո բացահայտ հայտարարել է Տրանսիլվա-

նիայում հունգարական տարածքային ինքնավարության ստեղծման հնարավորության մասին:

Ռումինիայի ապագայի համար մեծ նշանակություն ունի նաև հեռանկարում իրեն Մոլդովայի Հանրապետության (Բեսարաբիայի) միացումը: Այսօր Ռումինիան ունիտար պետություն է՝ սոսկ պատմականորեն բաժանված երեք մասի՝ Վալախիայի, Մոլդովայի ու Տրանսիլվանիայի: Ի տարբերություն Տրանսիլվանիայի, Մոլդովայի տարածաշրջանում ինքնավարական շարժումները բավական թույլ են եւ ավելի կենտրոնացած են տեղական ինքնագիտակցության զարգացման վրա: Սակայն պետության կազմում Բեսարաբիայի ընդգրկման դեպքում (որը, ամենայն հավանականությամբ, կստանա ինքնավարության իրավունք), ռումինական Մոլդովայի կարգավիճակի բարձրացման համար շարժումն, անշուշտ, կսաստկանա: Հավանաբար, վերստին հրատապ կդառնա նաև մոլդովականության գաղափարախոսությունը՝ այժմ արդեն համամոլդովական ծավալով, որի հիման վրա եւ կարող է տեղի ունենալ պատմական Մոլդովայի վերամիավորումը: Նման տարածաշրջանին ինքնավարության իրավունքների տրամադրումն անխուսափելիորեն կհանգեցնի ողջ Ռումինիայի ֆեդերալացման: Եթե Եվրոպայի հետագա զարգացումն այսուհետեւ էլ ընթանա «Եվրոպայի տարածաշրջանների» ուղղությամբ, ապա Ռումինիայի ամբողջական ընկալումն ապագայում կարող է այլևս ժամանակավրեպ լինել:

apn.ru

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ԿԱՄ ԱԶԳԵՐԻ ԱՊԱՊԵՏԱԿԱՆ ԱՊԱԳԱՅԻ ՇՈՒՐՋ	1
Գազիկ Տեր-Հարությունյան ՎՐԱՑ-ՌՈՒՄԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ	2
ՍԵՆԱԿ Սարուխանյան ԷՆԵՐԳԵՏԻԿ ԳՈՐԾՈՆԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ՝ ՎԵՐՋԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ	9
Սարգիս Հարությունյան ԻՐԱՎԻՃԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ	13
Ռուբեն Սաֆրաստյան ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՆՈՐ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ	19
Հիքմեթ Աքչիչեք «ՀԱՄՇԵՆՑԻՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱԳՈՒՄՆ ԻՆՁ ԱՎԵԼԻ ԻՐԱԿԱՆ Է ԹՎՈՒՄ»	22
Արաքս Փաշայան ԱԴՐԲԵՋԱՆԸ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՇԵՄԻՆ	27
ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ԱԼԳՈՐԻԹՄԸ	31
Օլեգ Նեմենսկի POST-KOSOVO. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՎՐՈՊԱ	36

*Շապիկին պատկերված է
Ուխտասարը (Սյունիք)*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
Խմբագրական խորհուրդ
Երեւան, 375010, Մելիք-Աղամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:
Էլ. փոստ՝ hanrapetakan@hkh.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:
Պայմանական 4 մամուլ: Տպաքանակը՝ 1000:
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:
Վկայական՝ ՕԼՄ 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: